Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

(4-25 մայիսի 2004 թ.)

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մայիսի 4–25-ը հովվապետական անդրանիկ այցելությամբ եղավ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Հարավային Ամերիկայի հայոց երեք թեմերում:

Հովվապետական անդրանիկ այս այցելության ընթացքում Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը, Տ. Կյուրեղ աբեղա Վարդանյանը՝ որպես գավազանակիր, Երևանի Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Վիլեն Հակոբյանը, «Տիգրան Մեծ» հրատարակչատան տնօրեն Վրեժ Մարկոսյանը և «Ծողակաթ» հեռուստաընկերության աշխատակից Սուրեն Տեր-Գրիգորյանը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԲՐԱԶԻԼԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

(4–10 մայիսի 2004 թ.)

4 մայիսի

Մայիսի 3-ին դուրս գալով Մայր Աթոռ Ս. Էջմիածնից, Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Երևան–Լոնդոն–Սան Պաուլու չվերթով Բրազիլիա ժամանեց մայիսի 4-ին, առավոտյան ժամը 5.10-ին:

Չնայած որ դեռ վաղ առավոտ էր, Սան Պաուլոյի միջազգային օդանավակայան էին եկել բազմաթիվ բրազիլահայեր և համայնքային տարբեր կառույցների ներկայացուցիչներ՝ Բրազիլահայոց թեմի առաջնորդ Տ. Տաթև արքեպիսկոպոս Ղարիբյանի գլխավորությամբ: Վեհափառ Հայրապետին Հարավային Ամերիկայում դիմավորելու համար Սան Պաուլու էր եկել նաև արգենտինահայոց պատվիրակությունը, գլխավորությամբ Արգենտինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գիսակ արքեպիսկոպոս Մուրադյանի և անդամակցությամբ Պետրոս Հաջյանի ու Լուիզ Սանջյանի:

Օդանավակայանի պատվավոր հյուրերի ընդունելության սրահում տեղի ունեցած բարիգալստյան և աջամբույրի արարողություններից հետո Նորին Սրբությունը պետական արարողակարգով նախատեսված պատիվներով առաջնորդվեց Սան Պաուլու:

Երեկոյան Վեհափառ Հայրապետը հյուրընկալվեց Բրազիլիայի հայ համայնքի ներկայացուցչական ժողովի ատենապետ, պրոֆեսոր Անդրանիկ Մանիսաճյանի բնակարանում: Ընդունելությանը հրավիրված էին նաև համայնքի և տեղական իշխանությունների տար-

բեր ներկայացուցիչներ: Այսպեղ բարիգալսպյան խոսքով Վեհափառ Հայրապետին դիմեց պրոֆեսոր Մանիսաճյանը, ապա իր և գաղութի բարերարներից Ներսես Վարդանյանի կողմից Նորին Սրբությանը նվիրեց աղամանդակուռ մատանի:

5 մայիսի

Առավոտյան Սան Պաուլուի Ս. Գևորգ եկեղեցում «Հրաշափառ»-ով սկսվեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անդրանիկ հովվապետական այցելությունը Հարավային Ամերիկայի հայոց երեք թեմերին:

Վեհափառ Հայրապետին Հարավային Ամերիկա և Բրազիլիայի հայոց թեմ այցելության առիթով բարիգալսպյան խոսք ասաց Տ. Տաթև արքեպիսկոպոս Ղարիբյանը.

Վեհափառ Տէր,

Յանուն Պրազիլահայ թեմիս հոգեւորականաց դասուն, Ազգային Ներկայացուցչական Մարմնին, Գործադիր Վարչութեանց, գործող կազմակերպութիւններուն եւ համայն հաւատացեալներուն, քաղցր պարտականութիւնը ունիմ ողջոյնի իմ խօսքը ուղղելու Ձերդ Սրբութեան, այս անդրանիկ Հայրապետական եւ Օրհնաբեր այցելութեան բարեբաստիկ առիթով:

Պրազիլահայ Գաղութը անգամ մը եւս երջանիկ առիթը կունենայ ընդունելու Հայրապետական այցելութիւնը Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որ կու գայ Սուրբ Էջմիածնէն, բերելով իր Օրհնութիւնը, իր Պատգամը եւ Ողջոյնը Մայր Աթոռէն եւ Մայր Հայրենիքէն, Հարաւամերիկայի իր հոգեւոր զաւակներուն:

Արդարեւ, անցնող տարիներու ընթացքին, մեր թեմը բախտաւորուեցաւ երջանկայիշատակ Տ.Տ. Վազգէն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին երիցս Հայրապետական այցելութիւններով, 1960-ին, 1968-ին եւ 1984-ին, եւ առիթը ունեցաւ վերանորոգուելու իր քրիստոնէական հաւատքին, Եկեղեցւոյ հանդէպ իր հաւատարմութեան եւ Մայր Հայրենիքի հանդէպ իր անվերապահ սիրոյն մէջ:

Նորին Սրբութեան վախճանումէն վերջ, 1994-ին, երբ Հայ Եկեղեցին եւ Մայր Աթոռը անգամ մը եւս վերացնելով ագոյ քոչը Հայրապետական Աթոռէն, կրկին ունեցաւ իր նոր աթոռակալը՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Անոր զահակալութեան երկրորդ տարին, Պրազիլահայութիւնը անգամ մը եւս արժանացաւ հայրապետական այցելութեանը նորընտիր Հայրապետին, 1996-ին, որ բերաւ անկախացած Մայր Հայրենիքի նոր յոյսերուն հետ նաեւ Իր հայրական օրհնութիւնը, խրախուսելով իր հոգեւոր զաւակները հաւատարիմ եւ հաստատ մնալ քրիստոնէական հաւատքին մէջ Հայաստանեայց Առաքելական Մայր Եկեղեցիին հովանիին տակ եւ Անոր առանցքութիւններուն:

Նորին Սրբութեան անժամանակ վախճանումով, բովանդակ ազգին հետ, ցնցուեցաւ նաեւ մեր համայնքը, երբ սուգի մատնուեցան Հայ Եկեղեցին եւ ժողովուրդը:

Աստուծոյ կամքը եւ մեր ժողովուրդի սէրը, հանդէպ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցիին եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, անգամ մը եւս արտայայտուեցան հրաշալիօրէն, երբ ազգը ամբողջ, իր ձայնը միացուց նախախնամութեան կարգադրութեան, եւ «Ողորմութեամբն Աստուծոյ եւ կամօքն Ազգիս», 1999 հոկտեմբերին, Սուրբ Գրիգոր Լուսաւորչի արժանաւոր յաջորդ ընտրուեցաւ Զերդ Սրբութիւնը, իբրեւ Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ, 132-րդ Կաթողիկոսը Ամենայն Հայոց:

Զերդ Սրբութեան Գահակալութեան առթիւ, Պրազիլահայ մեր համայնքը իր ձայնը միացնելով աշխարհով սփռուած իր բոլոր արեւնակիցներուն, աղօթք բարձրացուց առ Ամենակալն Աստուած, որ անսասան պահէ Մայր Աթոռը Ամենայն Հայոց, երկար եւ քաջառողջ կեանք պարգեւէ Նորընտիր Հայրապետին, վասն պայծառութեան Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցւոյն եւ ի միխթարութիւն հայ հաւատաւոր ժողովուրդին, ի Հայաստան, յԱրցախ եւ ի Սփիւռս աշխարհի:

Վեհափառ Տէր, Պրազիլահայ Գաղութն ու համայնքը, ուրիշ ոչ թէ տասնամեակներ ամբողջ, կապրի այս հեռաւոր, այլ հիւրընկալ Պրազիլական հայրենիքին մէջ, խաղաղ, ապահով, ազատ եւ երջանիկ: Հայոց Մեծ եղեռնէն վերապրողներ, երբ կայք հաստատեցին նաեւ այս ափերուն, անմիջապէս մտահոգուած ապագայ սերունդի ազգային ինքնութեան եւ քրիստոնէական հաւատքի պահպանման կենսական հարցով, վերակառուցելէ վերջ իրենց տունն ու տեղը, հաստատեցին նաեւ հայ Դպրոցն ու հայ Աղօթքի Տունը:

Բազմամիլիոն եւ բազմացեղ այս ժողովուրդներուն մէջ, երբ օտար մշակոյթներն ու սովորութիւնները կոմնենան իրենց ծանր ազդեցութիւնները, անշուշտ դիւրին պիտի չլլլան ազգային եւ հաւատքի գոյատեւման աշխատանքները, որոնց համար Աստուծոյ Ողորմութեամբ, չպակսեցան այս գաղութէն ներս նուիրեալ կրթական մշակներ եւ եկեղեցական նոյնքան նուիրեալ ապաստարներ:

Ամէն անգամ երբ Մայր Աթոռէն կամ մեր միւս հոգեւոր եւ ազգային կեդրոններէն, զանազան առիթներով կոչեր հասած են այս ափերուն, Պրազիլահայութիւնը անսակարկօրէն բերած է իր լայն մասնակցութիւնը, բարձր պահելով իր ազգային գիտակցութիւնն ու արժանապատուութիւնը, մղուած իր եկեղեցասիրութեան եւ հայրենասիրութեան նախանձախնդրութենէն:

Վեհափառ Տէր, Պրազիլ հաստատուած Զեր հոգեւոր զաւակներուն ծանօթ են նաեւ, Սուրբ Էջմիածնէն ներս եւ Հայաստանի զանազան շրջաններուն մէջ Զերդ Սրբութեան դրական բազմաթիւ իրագործումները, որոնք սա հինգ տարիներու ընթացքին եկան վկայելու, որ մեր ներկայ Հայրապետին հոգին եւ մտքի պայծառ ալացքը դէպի լուսաւոր ապագայ, ի խնդիր Հայ Եկեղեցւոյ եւ Մայր Հայրենիքի լուսաւոր ապագային, զեղուն է Աստուածային ներշնչումներով եւ նկարագրի ամրակուռ կամքով:

Պրազիլահայ համայնքը եւս, ամբողջ ազգին հետ միասին, երջանիկ է այսօր, երբ կը տեսնէ հայ ժողովուրդի հաւատքի հօր՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի արժանաւոր յաջորդը, մեր ներկայ երիտասարդ, իմաստուն, բարի եւ շնորհալի Ամենայն Հա-

յոց Կաթողիկոսը՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. որուն գահակալութեամբը ամբողջ ազգը կը մնայ կապուած Սուրբ Էջմիածնին, նոր յոյսերով հաւատալ իր հաւատքին եւ հաւատարիմ իր Մայր Եկեղեցիին:

Այս զգացումներով լցոգորուած, Պրազիլահայ համայնքը հոգեկան ցնծութեամբ եւ միխթարութեամբ, այսօր իր սրտին եւ հոգիին մէջ կը զգայ եւ կապրի Աստուածային այն մեծ Շնորհքի գեղեցկութիւնը, որ Հայոց Ընդհանրական Հայրապետին Օրհնաբեր այցելութիւնն է իրեն:

Ան, ահա այցի կու գայ այսօր Պրազիլ, դէպի Իր հոգեւոր եւ հարազատ զաւակները, որպէսզի անոնք անգամ մը եւս իմանան, թէ որքա՛ն հեռաւոր այս ափերուն: Ունին հարազատ Ծնողք եւ Տուն Հայաստանեայց Առաքելական մեր Մայր Սուրբ Եկեղեցին եւ Մայր Հայրենիք նորանկախ Հայաստանը, որոնց անունէն կու գայ Ան, եւ որուն բարի Միտքը կը զեղու հայրական անսահման այնպիսի սիրով մը, որ զինք մղած է, ովկիանոսներով եւ աշխարհամասերով բաժնուած հեռաւոր իր զաւակներուն ԱՅՑԻ ԳԱԼ եւ բաշխել իր ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ եւ ՍԷՐԸ բոլորին:

Այս ուրախաւոյժ եւ պատմական առիթով, անսայլայլօրէն Պրազիլահայութեան որդիական զգացումներուն ամենահարազատ արտայայտութիւնը պիտի ըլլայ, երախտագիտական խոր եւ ջերմ զգացումներով գոչել.

ԳԱԼՈՒՍՏԴ ԲԱՐԻ ԸԼԼԱՅ, ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ, ԵՒ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԴ ՕՐՀՆԱԲԵՐ:

Թեմական առաջնորդի բարիգալստյան խոսքից հետո ներկաներին իր օրհնության խոսքն ուղղեց Նորին Սրբությունը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՍԱՆ ՊԱՈՒԼՈՒԻ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Սիրելի Սրբազան, հոգեշնորհ և արժանապատիվ հայրեր, թեմական-համայնքային իշխանությանց պատվարժան ներկայացուցիչներ և սիրելի հավատավոր ժողովուրդ.

Փառք ենք մատուցում Աստծուն, որ շնորհեց Մեզ ուրախությունը Հովվասպետական Մեր անդրանիկ այցելությունը կատարելու Բրազիլիայի հայոց թեմ և այսօր Սուրբ Գևորգ եկեղեցու կամարների ներքո ձեզ հետ միասին աղոթք բարձրացնելու երկիրք:

Սիրելիներ, Մեր առաջին խոսքը ջերմագին ողջույնն է, որ բերել ենք ձեզ Մայր Հայրենիքից, հայրենաբնակ ձեր եղբայրներից ու քույրերից: Բերել ենք ձեզ սերն ու օրհնությունը Սուրբ Էջմիածնի, որի նվիրական, պաշտելի պատկերը ձեր հոգիներում է, ինչպես բոլոր հայորդոյց հոգիներում է՝ որտեղ էլ ապրեն:

Էջմիածնածնունդ ու էջմիածնասնունդ է հայ հոգին արդեն 17 դար: Իր կյանքի իմաստը, իր գոյության խորհուրդը մեր ժողովուրդը գտել է քրիստոնեության մեջ, փրկության հույսի ու հարության հավատի մեջ, որը լուսավորել է փորձութ-

յուններով լեցուն ճանապարհը մեր ժողովրդի և պարզևել հաղթանակներ: Մահվան արի առջև չդադարեց հայի աղոթքը, ավերների մեջ չպարպվեց հույսն ու սերը, չլռեց նրա «Այր, Բեև, Գիմ»-ը, չմարեց նրա երգը: Վկա է այս եկեղեցին, վկա եք դուք, որ խանդավառությամբ հավաքվել եք՝ դիմավորելու ու ողջունելու ձեր Հայրապետին: Վկա են սրբալույս հոգիները ձեր հայրերի, ովքեր նույնպես բազմաթիվ դժվարություններ հաղթահարեցին և հավատով ու նախնյաց ավանդներով հայրենի ծուխը ծխեցին, համախումբ մնացին Առաքելական մեր Եկեղեցու շուրջ և բաջությամբ կազմակերպեցին հոգևոր-ազգային հայ կյանքը, որի շարունակողն ու գործացնողն եք դուք, սիրելիներ:

Ուրախ է Հայրապետիս հոգին՝ տեսնելով ձեզ հավատավոր ու հավատարիմ հայրենյաց ժառանգությանը: Մեր բարձր գնահատանքն ենք բերում Առաջնորդ Սրբազանին, հոգևոր դասին, եկեղեցական վարչականներին, ազգային-մշակութային կառույցների պաշտոնեությանը, ովքեր բոլորանվեր ջանքեր են բերում, որպեսզի մեր զավակաց հոգիներում վառ լինի հավատը, Լուսավորչի կանթեղի լույսը և շուրթերին անմար՝ ոսկեղենիկ հայոց լեզուն: Գիտենք, որ ձեր ծառայության ճանփան դյուրին չէ, սակայն հոգու վկայությամբ հավատում ենք, որ մեր երկնաբնակ սուրբերի բարեխոսությամբ Տերը ձեզ զորավիգ ու մարդակից կլինի՝ փրկչական ու ազգապահպան ձեր առաքելության ճանապարհին:

Սիրելիներ, հպարտություն և հոգու անհուն ուրախություն ենք ապրում, իբրև Հայոց Հայրապետ, երբ տեղեկանում ենք ձեր բարի գործերի մասին, Բրազիլիայի կյանքի առաջընթացին ձեր բերած ներդրման մասին: Ջերմ ընդունելությունն ու վերաբերմունքը, որ գտանք Բրազիլիայի իշխանությունների կողմից, արձագանքն է այս հողի վրա ձեր ազնիվ ու ստեղծագործ կյանքի, Բրազիլիայի հանդեպ ձեր սիրո, նվիրումի և հավատարմության:

Մեր աղոթքն է, որ Տերը հանապազ իր խնամքի ներքո պահպանի ջրևաղ ու հյուրընկալ Բրազիլիան և խաղաղության ու բարօրության մեջ՝ նրա ապրվածասեր ժողովրդին:

Մեր սրտի փափագն է ու պարտքը ձեզ, որ ձեր հոգու հայացքը միշտ ուղղված լինի Մայր Հայրենիքին, Սուրբ Էջմիածնին ու Ազգային Մասիսին, և դուք շարունակեք ապրել մեր հավատքի կենդանարար զորությամբ, մեր հայրերի ժառանգությամբ: Թող ձեր եկեղեցասիրությամբ ու ազգասիրությամբ փառավորվի ձեր հայությունը և բարի անունը մեր արարող ժողովրդի:

«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ եղիցի ընդ ձեզ եւ ընդ ամենասեան. ամէն»:

«Հրաշափառ»-ի արարողությունից հետո Վեհափառ Հայրապետը կատարեց Դուրյան վարժարանի «Գալուստ Գյուլբենկյան» վերանորոգված գրադարանի և բնագիտական առարկաների դասասենյակի բացումը, որից հետո հանդիպեց Դուրյան և ՀԲԸՄ Բազարյան վարժարանների աշակերտության, նրանց ծնողների և ուսուցչական կազմի հետ:

Ս. Գևորգ եկեղեցու հոգևոր հովիվ և Դուրյան վարժարանի տնօրեն Տ. Եզնիկ քահանա Կյուզելյանի ղեկավարությամբ գեղարվեստական հայտագրով հանդես եկան վարժարանի սաները, որոնց անունից Նորին Սրբությանը դիմեց Դուրյան վարժարանի աշակերտուհի Կատերինե Բոյաջյանը.

Մեզի համար մեծ երջանկութիւն է, ընդունիլ Ձեզ մեր դպրոցի նուիրական այս յարկի տակ: Այս պահը մեր կեանքի ամէնէն երջանիկ պահերէն մին է արդարեւ: Մեծապէս հպարտ ենք մեզի ընծայուած այս եզակի պատեհութեան համար, յիշատակելի եւ անմոռանալի թուական մը պիտի ըլլայ անկասկած, Վեհափառ Տէր:

Դուք եկած էք Ձեր այս փոքր հօտին այցելութեան: Ձեր այս հովուական առաջին այցելութիւնը ըլլայ օրհնաբեր, իսկ մեր մեկ հատիկ վարժարանին պարագային՝ արդիւնաբեր, որպէսզի սա պահուս Ձեր աչքերուն պարզուող մեր աշակերտներուն թիւը գալիքին բազմապատկուի:

Մեր ուսուցիչները սորվեցուցած են մեզի սիրել Հայ Եկեղեցին, Հայրենիքը եւ մեր մայրենի լեզուն:

Վեհափառ Տէր, կը խոստանանք ըլլալ մեր նախահայրերուն նման ազգասէր եւ հայրենասէր, հաւատարիմ մնալով մեր Եկեղեցիին, Հայրենիքին և մշակոյթին:

Հանդիպման ընթացքում իր օրհնությունը բաշխելով հավաքվածներին՝ Նորին Սրբությունը շեշտեց հայեցի կրթության և դաստիարակության կարևորությունը Սփյուռքի գաղթօջախներում և հորդորեց նույն սիրով, նվիրումով ու նախանձախնդրությամբ պահպանել հայկական վարժարանները, աշակերտներին՝ քաջեռանդ լինել, լավ սովորել ու դառնալ արժանավոր զավակները հայ ժողովրդի ու Բրազիլիայի:

Կեսօրին, առաջնորդարանի սրահում համայնքի ՀՕՄ-ի զույգ մասնաճյուղերի կազմակերպած ընդունելություններից հետո, Վեհափառ Հայրապետն այցելեց առաջնորդարանի հարևանությամբ գտնվող ՀՕՄ Արփի մասնաճյուղ և ապա հայ տարեցների Հանգստյան տուն:

6 մայիսի

Առավոտյան Նորին Սրբությունը հայրապետական շքախմբով, համայնքային կառույցների պատասխանատուների և Հայաստանի Հանրապետության հյուպատոսության ներկայացուցիչ Լուսինե Եղիազարյանի հետ, որը Նորին Սրբությանն ուղեկցում էր Բրազիլիայում Հովվապետական այցելության ողջ ընթացքում, այցելեց Սան Պաուլուի նահանգային Օրենսդրական ժողով: Այստեղ ի պատիվ Վեհափառ Հայրապետի կատարվեցին Հայաստանի և Բրազիլիայի Հանրապետությունների պետական օրհներգերը:

Օրենսդրական Ժողովի նախագահ Սիդնեյ Բերալդոն հանդիպման ընթացքում բարձր գնահատեց հայ համայնքի դերը Սան Պաուլուի և ընդհանրապես Բրազիլիայի կյանքում: Ի հիշատակ այս հանդիպման, Օրենսդրական Ժողովի նախագահը Նորին Սրբությանը նվի-

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍԱՆ ՊԱՈՒԼՈՒԻ ՆԱՀԱՆԳԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՏ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍԱՆ ՊԱՈՒԼՈՒԻ ՆԱՀԱՆԳԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ՀԵՏ

Армянская акад. наук Армянской ССР

ՏԵՍ ԿՈՄԻՏԵԻՆԵՐԸ ԿՈՄԿՈՒՍՏԻՆԵՐԻ ՀԵՏ

րեց յուրօրինակ մի խճանկար՝ կազմված սուրճի և Բրազիլիայի հարստությունը կազմող մի քանի այլ բուսատեսակների հատիկներից:

Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնելով իշխանություններին՝ հայ համայնքի հանդեպ տածած բարյացակամ վերաբերմունքի համար, մաղթեց, որ միշտ բարեբեր ու բարգավաճ լինի Բրազիլիան:

Նորին Սրբությունն իր հերթին պարոն Բերալդոյին նվիրեց հայ մանրանկարչության ավանդների հետևողությամբ կատարված մի զարդանկար, որը գետեղվեց Սան Պաուլուի Օրենսդիր Ժողովի այն սրահում, ուր ցուցադրվում են աշխարհի ժողովուրդների մշակույթը ներկայացնող տարբեր ստեղծագործություններ:

Խորհրդարանի տարածքում ի հիշատակ Հայոց Մեծ եղեռնի նահատակների կանգնեցված խաչքարի մոտ Նորին Սրբությունը կատարեց հոգեհանգստյան կարգ՝ աղոթելով Հայոց Մեծ եղեռնի նահատակների հոգիների համար:

Նույն օրը Վեհափառ Հայրապետն առաջնորդարանում հանդիպեց քույր Եկեղեցիների, ինչպես նաև Հայ Ավետարանական և Հայ Կաթոլիկ համայնքների հոգևոր առաջնորդների հետ, որոնց բոլորի անունից խոսք ասաց Սան Պաուլուի Կարդինալ Կլաուդիո Հումեսը: Ողջունելով քույր Եկեղեցիների ներկայացուցիչներին, պատասխան խոսքում Նորին Սրբությունը պատմական մի անդրադարձով ներկայացրեց Հայոց Եկեղեցու 1700-ամյա ընթացքը, նշանակալից դերը մեր ժողովրդի կյանքում և ընդհանուր քրիստոնեական աշխարհին բերած նպաստը: Եկեղեցիների այսօրվա գործունեությունում Նորին Սրբությունը կարևորեց ճշմարիտ էկումենիզմի ոգին, որով հնարավոր պիտի լինի մեկտեղված ջանքերով արդյունավորել քրիստոնեական Եկեղեցիների առաքելությունը՝ ի հանդիման ներկա հրամայականների:

Առաջնորդարանում Վեհափառ Հայրապետն այնուհետև հանդիպեց համայնքային բոլոր կառույցների ներկայացուցիչների հետ՝ մաղթելով միասնաբար աշխատել ի խնդիր հայապահպանության և բրազիլահայ համայնքի զորացման: Երեկոյան Սան Պաուլուի առաջնակարգ սրահներից «Բուֆե Ֆրանս»-ում համայնքային ճաշկերույթ տրվեց՝ ի պատիվ Վեհափառ Հայրապետի, որին ներկա էին քույր Եկեղեցիների և տեղական իշխանությունների մի շարք ներկայացուցիչներ և հարյուրավոր բրազիլահայեր:

Երեկոյի մասնակիցներին բաժանվեց բրազիլահայ համայնքի պատմությունը և համայնքային կազմակերպությունները ներկայացնող շքեղ հրատարակությամբ մի գրքույկ՝ կազմված հատկապես Հովվապետական այս այցելության առիթով:

Ամենայն Հայոց Կաթողիկոսին հյուրասիրության ընթացքում ողջույնի և բարիգալստյան խոսքով նախ դիմեց բրազիլահայոց թեմի ատենապետ պրոֆեսոր Անդրանիկ Մանիսաճյանը, ապա թեմական առաջնորդ Տ. Տաթև արքեպիսկոպոս Ղարիբյանը, ասելով.

Իրաքանչիւր հայորդի, որ կ'ապրի այս օրերու երջանիկ եւ հոգեւոր միխիթարութեան պահերը, իր սրտի խորերէն կը վերառաբէ աղօթքը առ Աստուած, գոհութիւն յայտնելով այս բացառիկ հանդիպումին համար, որ շնորհեց իրեն: Արդարեւ քաղցր երազանք էր շատերուն, իրենց սեփական աչքերով տեսնել եւ ստանալ օրհնութիւնը Ամենայն Հայոց Հայրապետին, որուն Անձին ընդմէջէն այսօր կը

զգացուի ներկայութիւնը նախորդ 131 Երանաշնորհ Հայրապետներուն, սկսեալ մեր հաւատքի հայր Սուրբ Գրիգոր Լուսաւորիչէն, որուն հրաշալի Տեսիլքով, մեր Տիրոջ եւ Փրկչին սէրը եւ գնահատանքը արտայայտուեցաւ Հայաստան Աշխարհին եւ հայ ժողովուրդին:

Ուրեմն այսօր Պրազիլահայ Գաղութին վերապահուած է պատմական օր մը ըլլալու առիթը, քանի որ ան կ'արժանանայ Ազգիս Ընդհանրական Վեհափառ Հայրապետին այցելութեանը, որ սքանչելի եւ հարազատ արտայայտութիւնն է Նորին Սրբութեան հայրական բարձր ուշադրութեանը եւ մանաւանդ հայրական անխառն սիրոյն Պրազիլիոյ մէջ ապրող Իր հոգեւոր զաւակներուն նկատմամբ:

Վեհափառ Տէր, կ'ուզեմ վստահեցնել Ձերդ Սրբութիւնը, որ այս պահուս դժուար պիտի ըլլայ ինծի, թարգմանը հանդիսանալ գնդութիւս հաւատացեալներուն հոգեկան խոր ապրումներուն, որոնք անգամ մը եւս արթնցան ի տես Հայոց Հայրապետին շնորհաբեր ներկայութեան:

Այսօրուայ Պրազիլահայը, Մեծ Եղեռնէն վերապրող չորրորդ կամ հինգերորդ սերունդի պատկանող, այս հեռաւոր ափերուն ծնած, այս երկրին հարազատ քաղաքացին է, որ իր հոգւոյն խորը արմատացած ազգային գիտակցութեան նշոյլներուն կեանք կու տայ, ամէն անգամ որ առիթը ունենայ Հայ Եկեղեցւոյ ձայնը լսելու: Ան գիտակցութիւնը ունի ազգային եւ կրօնական իր պատկանելիութեան, որոնց ամուր կառչած, ամէն զոհողութիւն յանձն առնելով կը ջանայ իր կապուածութիւնը պահել իր արմատներուն:

Պէտք է խոստովանինք նաեւ, որ ենթակայ ենք անանպատ այնպիսի պայմաններու, որոնց պատճառաւ, արդէն մեր լեզուն եւ մշակոյթը բաւականին նահանջած է մեր ընկերային կեդրոններէն, ընտանիքներէն եւ ահա իր ահաւոր ապառնալիքը մինչեւ իսկ հասած է մեր Եկեղեցիի սահմաններուն:

Սակայն պէտք է ուրախութեամբ յայտնել նաեւ, որ Պրազիլահայ համայնքը սրտով եւ հոգիով կ'ապրի իր Մայր Եկեղեցւոյ հովանիին ներքեւ, կապուած Անոր միջոցով Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին: Ունի գիտակցութիւնը իր նախնիքներու սուրբ հաւատքին, հերոսական սիրտերուն, նուիրումին եւ զոհաբերութիւններուն, եւ իբրեւ հարազատ զաւակ, սիրով եւ հպարտութեամբ կապուած է իր Մայր Հայրենիքին: Իր այս առաքինութիւնները քանիցս փաստուեցան, երբ անցեալին կոչեր հասան հայրենիքէն եւ մեր այլ հոգեւոր եւ ազգային կեդրոններէ: Բացառիկ երեւոյթ մըն էր, ի լուր Հայաստանի ողբերգական ահաւոր երկրաշարժի օրերուն, 1988 թուին, մեր գաղութի ամենահեռու անկիւններէն յայտնուող հայորդիներու հոգեկան խառվքը, անոնց խրաքանչիւրին ցանկութիւնը գաղութիս մէջ կազմակերպուած օգնութեան աշխատանքին:

Վեհափառ Տէր, այսօր միտիթարուած եւ հպարտ ենք, որ Ձերդ Սրբութիւնը մեզի հետ է: Քաջալերուած ենք հոգեպէս: Վստահ եղէք, որ մեր գաղութի խրաքանչիւր անհատի մտքին, հոգիին եւ սրտին մէջ պիտի տպաւորուած մնայ Ձեր այս Օրհնաբեր այցելութիւնը: Վստահ եղէք նաեւ, որ բոլորը այսօր ինծի հետ համաձայն պիտի ըլլան, երբ ըսեմ, թէ բառեր կը պակսին հարազատօրէն արտայայտե-

լու համար մեր սիրոյ, երախտագիտութեան եւ ուրախութեան զգացումները Ձեր հայրական անսահման սիրոյն եւ բարձր ուշադրութեանը համար, զորս ցուցաբերեցիք եւաւ մեզի այցի գալով, ովկիանոսներով եւ աշխարհամասերով հեռու ապրող Ձեր հարազատ հոգեհայրերուն:

Ցանուն մեր գաղութի բոլոր Ձեր զաւակներուն սիրտի խնդրեմ, Վեհափառ Տէր, որ բաշխէք մեզի Ձեր Օրհնութիւնը, որպէսզի միշտ մեզի հետ ըլլայ մեր հայրերու Տէրը եւ մեր Փրկիչը Յիսուս Քրիստոս: Որպէսզի մեր մէջ ապրի եւ մշտական ներկայութիւն մը ըլլայ Սրբութիւն Սրբոց Սուրբ Էջմիածինը: Որպէսզի հեռաւոր մեր Մայր Հայրենիք Հայաստանը, իր պետականութեամբ եւ ժողովուրդով, մնան մեր սրտերուն եւ հոգիներուն մէջ: Անոնցմով ոգեւորուած, միշտ վերանորոգ գիտակցութեամբ, եւ մանաւանդ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ հովանիին տակ, պահենք մեր քրիստոնէական հաւատքը, ազգային գիտակցութիւնը, մեր սրբութիւնները եւ հոգեկան արժէքները:

Բարի եկած էք, Վեհափառ Տէր, որպէս Հայ Եկեղեցւոյ զաւակներու, ընդունեցէք մեր որդիական անվերապահ սէրը Ձեզի եւ հաւատարմութիւնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդէպ: Տարէք Ձեզի հետ մեր բոլորին սէրը եւ ողջոյնները Հայաստանի ողջ մեր հարազատներուն: Մենք աղօթք ունինք բարձրացնելու առ Աստուած, որ հաստատ, բարգաւաճ եւ խաղաղ պահէ հայրենի երկիրը Հայոց եւ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին:

Մեր աղօթքն է նաեւ, որ Ձերդ Սրբութիւնը մնայ միշտ քաջառողջ կեանքով, երկար, շատ երկար տարիներով հովուելու եւ առաջնորդելու համար մեր պատուական ազգի բոլոր զաւակներուն հոգեւոր կեանքը ի Հայաստան եւ ի Սփիւռս աշխարհի, մեր Տիրոջ Աստուծոյ ճանապարհով, Աստուածային սիրոյ, համերաշխութեան եւ խաղաղութեան մէջ:

Այնուհետեւ ցուցադրվեց «Շողակաթ» հեռուստաընկերության նկարահանած «Շարունակվող առաքելություն» ֆիլմը, որը ներկայացնում է Մայր Աթոռի գործունեությունը Գարեգին Բ Կաթողիկոսի գահակալության անցած հինգ տարիների ընթացքում:

Ի լրումն ցուցադրվածի՝ Վեհափառ Հայրապետն իր խոսքում պատմեց Հայաստանում ծավալած եկեղեցաշինության, պատմական եկեղեցիների ու վանքերի վերանորոգության և Ս. Էջմիածնի հոգևոր-քարոզչական գործունեության մասին՝ ուրախությամբ առանձնացնելով, որ Հարավային Ամերիկա այցելության նախօրեին Մայր Տաճարում կատարվեց ևս վեց քահանաների ձեռնադրություն: Վեհափառ Հայրապետը հատկապես կարևորեց եկեղեցականների նոր սերնդի պատրաստությունը՝ ի մասնավորի ասելով.

Դուք գիտէք, որ խորհրդային առաջին տարիներին հարյուրաւոր եկեղեցականներ գնդակահարվեցին ու աքսորվեցին, փակվեցին ու ավերվեցին վանքերն ու եկեղեցիները, քանդվեց ծիսական համակարգը, բռնագրավվեցին եկեղեցական կալվածքները, իսկ Սուրբ Էջմիածինը պահպանվեց իբրև պատմական արժեք:

Հայրենի անկախ պետականության վերահաստատումից հետո երջանկահիշատակ Մեր նախորդներ Վազգեն Ա և Գարեգին Ա Հայրապետների շրջանից առանձնակի կարևորվեց եկեղեցականների նոր սերնդի պատրաստությունը: Ավելացավ ուսանողների թիվը հոգևոր կրթական հաստատություններում: Հայաստանում ունենք երեք հոգևոր կրթօջախներ՝ Գևորգյան Հոգևոր Ճեմարանը, Վազգենյան Հոգևոր Դպրանոցը և Շիրակի Հոգևոր Ընծայարանը, ուր այժմ ուսանում են շուրջ 300 ուսանողներ: Ուրախ ենք ասելու, որ Գևորգյան Հոգևոր Ճեմարանին հայրենի պետության կողմից տրվել է բարձրագույն ուսումնական հաստատության կարգավիճակ: Ներկայիս համապատասխանեցվում են ծրագրերը, ստեղծվում են ամբիոնները: Մենք ամեն տարի ունենք 25 շրջանավարտներ, սակայն համապատասխան պատրաստությամբ և նկարագրով հոգևորականների պակասը մեծ է: Այս անհրաժեշտությունից ելնելով Մայր Աթոռում արդեն երկրորդ տարին է, որ գործում է քահանայից լսարան, ուր ընդունվում են բարձրագույն կրթությամբ անձինք, հիմնականում մարզերից, ովքեր երկամյա դասընթացների հետևելուց հետո ձեռնադրվելով, ծառայության կկոչվեն Հայաստանի տարբեր շրջաններում: Մեզ համար շատ կարևորված ծրագիր է Մայր Աթոռի երիտասարդ միաբաններին արտերկրում կրթության ուղարկելը, և այսօր ուսումը կատարելագործում են 25 երիտասարդ միաբաններ: Կարևոր ենք նկատում նաև հոգևոր կրթությանը զուգահեռ մեր եկեղեցականների կողմից այլ մասնագիտություններ ստանալը, որպեսզի լավագույնս կարող լինեն պատասխանելու հավատացյալներին հուզող ամենատարբեր հարցերի:

Վերջում Վեհափառ Հայրապետն իր գնահատանքի խոսքն ուղղեց ներկաներին: Երեկոն ավարտվեց ավելի քան մեկ ժամ տևած աջահամբույրով:

7 մայիսի

Առավոտյան Նորին Սրբությունը հանդիպեց Սան Պաուլոյի նահանգապետ Ժեռալդո Ալքմինի հետ: Նահանգապետը շեշտեց, որ ինչպես մյուս երկրներում, այնպես էլ Բրազիլիայում հայ համայնքն իր կարևոր նպաստն է բերում այդ երկրի զարգացմանը տնտեսության և մշակույթի ամենատարբեր բնագավառներում:

Երեկոյան Սան Պաուլոյի Ազգային պատկերասրահ-թանգարանում (Pianacoteca) տեղի ունեցավ «Հայոց Եկեղեցու գանձերը» ցուցահանդեսի բացումը՝ նախագահությամբ Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

Ցուցահանդեսը կազմակերպվել էր Սան Պաուլու նահանգի մշակույթի բաժնի կողմից՝ հովանավորությամբ բրազիլահայ գաղութի ճանաչված բարերար դոկտոր Վարուժան Բուրմայանի: Ցուցահանդեսի ընդհանուր պատասխանատուն էր Մայր Աթոռի վարչակազմակերպական գործերի կառավարիչ և Մայր Աթոռի թանգարանների վարիչ-տնօրեն Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանը, գիտական խորհրդատուն՝ արվեստաբան, Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանի տնօրեն Շահեն Խաչատրյանը: Ցուցահանդեսի կազմակերպ-

«Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԳԱՆՁԵՐԸ» ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՈՒՄ

ԻՎԻՍԷ ԻՑ ՏՍԷ

չական աշխատանքներն իրականացրեց «Հայաստան» համահայկական հիմնադրամի Բրազիլիայի մասնաճյուղի ատենապետ Օշին Մոստիջյանը:

Ցուցահանդեսի բացումը կատարեց թանգարանի տնօրեն դոկտոր Մարսելո Արաուժիոն, ապա ողջույնի խոսք ասացին Սան Պաուլուի նահանգի մշակույթի բաժնի վարիչ Կլաուդիո Կոստին և Վարուժան Բուրմայանը: Այնուհետև ներկաներին օրհնության իր խոսքն ուղղեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՍԱՆ ՊԱՈՒԼՈՒՈՒՄ «ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԳԱՆՁԵՐԸ» ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ԲԱՑՄԱՆԸ

Միրելի բարեպաշտ ժողովուրդ,

Միրելի քույրեր և եղբայրներ,

Ողջունում ենք ձեզ հայկական եկեղեցական արվեստի այս հրաշալի ցուցահանդեսի բացման առիթով, որը կրում է «Սուրբ Էջմիածնի գանձերը» անվանումը: Սուրբ Էջմիածինը մեր ժողովրդի հոգևոր կենտրոնն է՝ հիմնադրված ավելի քան 1700 տարիներ առաջ, երբ Հայաստանում 301 թ. քրիստոնեությունը ճանաչվեց պետական կրոն: Մեր ժողովրդի կյանքում այդ մեծագույն իրադարձության հոբելյանական հանդիսությունների առիթով նախորդ տարիներին մի շարք ցուցահանդեսներ են կազմակերպվել աշխարհի տարբեր մայրաքաղաքներում և ցուցասրահներում, ամենուր նշանակալից երևույթ դառնալով թե՛ այդ երկրների հոգևոր-մշակութային կյանքում և թե՛ այդ երկրներում ապրող Մեր զավակաց համար, որոնց հոգիներում ապրում է առ Աստված հավատի ու նվիրումի լույսը:

Սան Պաուլոյի այս ցուցահանդեսը նշանակալից է նաև նրանով, որ մեր Եկեղեցու արժեքներն առաջին անգամ ցուցադրվում են Ամերիկյան ցամաքամասում: Ցուցահանդեսի կազմակերպումը հնարավոր եղավ մեծագնիվ բարերարությամբ Տիար Վարուժան Բուրմայանի: Այս հանդիսավոր օրը ուրախ ենք Հայրապետական Մեր բարձր գնահատանքը բերելու Տիրուհի և Վարուժան Բուրմայաններին՝ աղոթքով, որ Տերը քաջառողջ և արնշաղ կյանքի օրեր պարգևի նրանց իրենց ընտանյաց անդամների հետ և հաջողություններ՝ նման ասպվածահաճո ձեռնարկներին: Այս առիթով Մեր օրհնությունն ենք բերում նաև Սան Պաուլոյի նահանգային և քաղաքային իշխանություններին, Սան Պաուլոյի նահանգի մշակույթի բաժնի պատասխանատու Կլաուդիո Կոստիին, թանգարանի տնօրինությանը և թանգարանի տնօրեն Մարսելո Արաուժիոյին: Մեր գնահատանքն ենք հայտնում և Ելենա Գասպարյանին, Օշին Մոստիջյանին և Վարդան Դերիկյանին: Նրանց բոլորի ջանքերով է, որ հարավամերիկյան քաղաքակրթությունն ու բազմաշերտ մշակույթը ներկայացնող Սան Պաուլոյի այս թանգարանի հավաքածուի կողքին այսօրվանից մոտ երկու ամիս կցուցադրվեն և Ս. Էջմիածնից բերված 73 արժեքներ, որոնցից յուրաքանչյուրն իր ուրույն ճակատագիրն ունի:

Նրանց մի մասը տարբեր դարերում գաղթաշխարհի հայությունը հայ վարպետների ձեռքով պատրաստել և ուղարկել է իր հոգևոր կենտրոն՝ Ս. Էջմիածին: Մյուսները պահվել են հայոց տարբեր վանքերում և ցրվել մեր Հայրենիքի վրայով անապատի խորշակի նման անցած Եղեռնի ավերիչ ալիքից: Հայ ժողովրդի բեկորների նման մեր արժեքները ևս ցրվել են աշխարհում, տեղ գտնելով տարբեր թանգարաններում և մասնավոր հավաքածուներում: Այստեղ ներկայացվողները բարեբախտաբար փրկվել են մեր հոգևորականաց ջանքերով, ինչպես նաև հայ գաղթականների շնորհիվ, ովքեր հացի փոխարեն որպես հոգևոր նշխար պահպանել են դրանք ու հասցրել Ս. Էջմիածին: Եվ այսպես, այս արժեքներից շատերն ունեն երկու պատմություն՝ ստեղծման և Ս. Էջմիածնում հանգրվանելու:

Այս գործերի նվիրատվական արձանագրությունները սկսվում են «Վիշապակ է...» խոսքերով, այնուհետև ասվում է, որ այն պատրաստվել է ի հիշատակ այսինչ հայորդու և այսինչ վանքի ու եկեղեցու համար: Նրանցում արտահայտվում է քրիստոնյա մեր ժողովրդի հավատը, մտածումն ու ապրումը և բազմադարյա մշակույթը:

Սիրելիներ, ամեն սրբություն օրհնություն է կրում իրենում, և Հայոց Եկեղեցու ավանդական այս սրբություններով թող առավել օրհնվի Բրազիլիո հյուրընկալ հողը, իսկ այս ափերում հանգրվանած մեր զավակաց համար այն թող դառնա կենդանի հաղորդություն մեր հոգևոր սրբությունների հետ:

Խոսքս ուղղելով մեր ժողովրդի՝ Բրազիլիո մեջ ապրող զավակաց, պետք է ասեմ, որ այս պահին երկու ցանկություն ունեմ.

Առաջին, որ Բրազիլիո և ընդհանրապես Լատինական Ամերիկայի ողջ տարածքին ապրող մեր հայորդիք այստեղ գան ոչ թե որպես ցուցահանդես դիտելու, այլ հոգևոր մի ուխտագնացության մեր հոգևոր արժեքներին:

Երկրորդ ցանկությունս այն է, որ այս արժեքները երկրորդ անգամ տեսնեք Սուրբ Էջմիածնում, որի 1700-ամյա կամարների ներքո վերապրեք, թե նյութական ինչ զրկանքներով, հոգեկան նվիրումով և սրտի թրթիռով են ստեղծվել այս գործերը:

Եվ նվիրումի ու հայրենակարոտության նույն այս ոգով թող լցվեն և ձեր հոգիները, և այս սրբությունները թող նորոգեն հայու ձեր ուխտը առ Հայրենիքն ու Ս. Էջմիածինը, որ մի անգամ ևս ուխտի գաք հայրենական մեր սրբավայրերին, իսկ ովքեր դեռևս չեն եղել Հայրենիքում, գան և ապրեն Հայրենիքի ուխտավորը լինելու անպատմելի զգացումը, իրենց համար կրկնելով թումանյանական անկրկնելի տողերը.

Երանի՛ քեզ, հայ ուխտավոր:

Եվ թող այս ցուցադրությունից ճառագող լույսով սկսվի ուխտագնացի ձեր ճանապարհը:

Այդ լույսը նաև մեր հոգևոր արժեքների ու բազմադարյան մշակույթի թարգմանը թող լինի Բրազիլիո ժողովրդի համար, որը ժամանակին հյուրընկալորեն ապաստան տվեց մեր ժողովրդի տարագիր զավակաց: Օգտվելով առիթից, Սան Պաուլուի Ազգային թանգարանի միջոցով Մեր գնահատանքն ու շնորհակալութ-

յուն ենք բերում Բրազիլիո ժողովրդին և պետությանը՝ Բրազիլիայում բնակվող հայորդյաց հանդեպ ունեցած բարի վերաբերմունքի համար: Թող Աստված իր օրհնության ներքո պահպանի Բրազիլիան և աշխարհը համայն:

Ցուցադրության ընթացքում հնչում էր Մակար Եկմալյանի Պատարագի երգեցողությունը՝ Հովհաննես Չեքիջյանի գլխավորած Հայաստանի Ակադեմիական երգչախմբի կատարմամբ: Բաժանվեց ցուցահանդեսի առիթով հրատարակված կատալոգը, որը բացվում է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով:

Ցուցադրության օրերի ընթացքում թանգարանում ամեն շաբաթ պիտի կարդացվեն հայ մշակույթին նվիրված դասախոսություններ: Դասախոսությունների շարքը «Հայ եկեղեցական արվեստը» զեկուցմամբ սկսեց «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագիր և Մայր Աթոռի Ձեռագրատան վարիչ Վարդան Դևրիկյանը: Դասախոսությունների այս շարքը կեզրափակվի Շահեն Խաչատրյանի երկու զեկուցումներով:

Հայ եկեղեցական արվեստի ցուցանմուշները Սան Պաուլուում կցուցադրվեն մինչև հունիսի 20-ը:

8 մայիսի

Առավոտյան Վեհափառ Հայրապետը մեկնեց Օզասկո, որը հայ բնակչության թվով Բրազիլիայի երկրորդ հայաշատ քաղաքն է: Տեղի Ս. Հովհաննես Մկրտիչ հայկական եկեղեցու ճանապարհին Նորին Սրբությունը նախ կանգ առավ քաղաքի հրապարակներից մեկում կանգնեցված Հայոց Մեծ եղեռնի զոհերի հուշարձանի առջև՝ իր աղոթքը վերառաքելով բյուրավոր նահատակների հոգիների խաղաղության համար:

Եկեղեցու մուտքի մոտ Նորին Սրբությանը դիմավորեցին Օզասկոյի հայոց հոգևոր հովիվ Տեր Պետրոս քահանան, Կաթոլիկ Եկեղեցու տեղի առաջնորդ Էրսիլիո եպիսկոպոս Տուրկոն, Օզասկոյի քաղաքապետ դոկտոր Սելսիո Ժիլիոն՝ տիկնոջ հետ, և բազմահարյուր հայեր Օզասկո և Սան Պաուլու քաղաքներից:

Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում «Հրաշափառ»-ի երգեցողությամբ դիմավորեցին Վեհափառ Հայրապետին, ինչպես ընդունված է Հայ Եկեղեցում: Օզասկոյի հայ համայնքի անունից բարիգալստյան խոսք ասաց Տաթև Սրբազանը:

Հավաքվածներին այնուհետև իր հայրապետական պատգամն ուղղեց Նորին Սրբությունը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՕԶԱՍԿՈՅԻ ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Սիրելի բարեպաշտ հավատացյալներ.

Գալիս ենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, գալիս ենք Հայաստանից՝ մեր հոգում պարուրած սերը մեր հայրենի հողի, օրհնությունը մեր բոլոր սրբատեղիներ-

րի. Մեր հոգում պարուրած բերելով ձեզ կարոտն ու ողջույնները ձեր եղբայրների և քույրերի:

Հայրապետիս համար միսիթարության օրեր եղան Բրազիլիայում անցկացրած Հովվապետական Մեր անդրանիկ այցի այս երեք-չորս օրերը. քանզի տեսանք, որ դուք պահպանում եք հավատարմությունը մեր հայրերի սրբազան ավանդներին և ժառանգությանը: Մենք տեսանք, որ դուք կարողացել եք հավատքը և լավատեսության ոգին ձեր մեջ ամուր պահած՝ հաղթահարել ձեզ բաժին ընկած բոլոր դժվարություններն ու փորձությունները, կերտել ձեր անհատական և ընկերային կյանքը և ապրել հյուրընկալ այս հողի վրա որպես արժանավոր քաղաքացիներ Բրազիլիայի:

Անցնող դարասկզբին հրեշավոր մի ծրագիր կար, որ ուզում էր ոչնչացնել Հայ ժողովուրդը, իսպառ ջնջել նրա անունը երկրի երեսից: Թշնամու չար այս մտածումը, դուք, սիրելի հայորդիք, ձեր հավատքով, առ Աստված ունեցած ձեր վստահությամբ կարողացաք օրհնության վերածափոխել: Սփյուռքի հայ գաղթօջախները, արդարև, այսօր օրհնության ակունք են մեր հայրենական կյանքի համար, մեր ողջ ժողովրդի համար:

Դուք եք այսօր հայ ժողովրդի դեսպանները Բրազիլիայում: Ձեզանով այստեղ գիտեն հայոց քրիստոնյա, հավատավոր հոգին, Հայ Եկեղեցին, մեր ժողովրդի հնամյա ու հարուստ ժառանգությունն ու մշակույթը, խաղաղության, ազատության, արարելու սերը: Այսօր ձեզանով հպարտ և ուրախ հոգով բերում ենք ձեզ Հայրապետական Մեր գնահատանքը, քանզի դուք քրիստոնյա հայի նկարագրով ու ազնիվ աշխատանքով փառավորել եք անունը հայության, հարգանքն ու սերը վաստակել Բրազիլիո իշխանությանց և ժողովրդի: Այս իրողությանց անբեկանելի վկայություններն են այն հրապարակներն ու այն փողոցները, որ անվանակոչված են մեր ժողովրդի և մեր երկրի անունով, արժանավոր հայորդյաց անուններով, ովքեր իրենց գնահատելի ներդրումն են կատարել Բրազիլիայի առաջընթացի գործում: Դրա վկայություններն են նաև այն հարգանքն ու ջերմ ընդունելությունը, որին արժանանում են ձեր Հայրապետները, երբ այցելում են այս օրհնյալ երկիրը:

Այսօր այստեղ ձեր Հայրապետին ողջունելու են եկել Օզասկոյի քաղաքապետը, Հռոմեական Կաթոլիկ մեր քույր Եկեղեցու ներկայացուցիչները: Նրանք առաջնորդվել են այն հարգանքից ու գնահատանքից, որ տածում են Օզասկոյի հայ համայնքի և հայորդյաց նկատմամբ: Հայրապետիս համար իրապես մեծ միսիթարություն է տեսնել ձեզ սիրված և գնահատված ձեր իշխանությունների և նաև ձեր համաքաղաքացիների կողմից:

Եվ մանավանդ միսիթարական է տեսնել, որ Սուրբ Էջմիածնի Մայր Կանթեղի լույսը պայծառ վառվում է Օզասկոյի հայոց եկեղեցում ու լուսավորում ձեր հավատքն ու ձեր հավատավոր ու ազգասեր կյանքը: Փառք Տիրոջը, որ պարգևեց մեզ Հայ Եկեղեցին, փրկության դրապանը մեր ժողովրդի, որպեսզի նեղությունների մեջ, Հայրենիքից մոտ ու հեռավոր ափերում ապրի առ Աստված ապավինութ-



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՍԱՆ ՊԱՈՒԼՈՒԻ Ս. ԳԵՎՈՐԳ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Академия наук Армянской ССР

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՕՁԱՍԿՈՅԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

ՕՁԱՍԿՈՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԸ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅԱՆՆ Է ՀԱՆՁՆՈՒՄ ՔԱՂԱՔԻ ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆ ԲԱՆԱԼԻՆ

յամբ, հայրենի ավանդներով, որը բարձր, համամարդկային արժեքներով օգնել է մեզ ստեղծել և ճանաչել ու գնահատել այլ ժողովուրդների ստեղծածը, օգնել է մեզ ապրել ու հարատևել: Արդարև, ժողովուրդ, «Բանն Կենաց յաւիտենականաց ունիս» (Հովհ. Զ 69):

Հայրապետական մեր հորդորն ու պատգամն է, սիրելիներ, որ շարունակեք ապրել նույն ջերմեռանդ հավատով և ազգային նախանձախնդրությամբ, ձեր ներկայությամբ ու գործերով պայծառ պահեք աղոթքի այս տունը: Օգասկոյի մեջ մի քանի հայ սերունդ է ծնվել Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու ավազանում և տակավին սերունդներ պիտի ծնվեն այս լուսեղեն ավազանից ու հասակ պիտի առնեն Աստուծո օրհնության ներքո՝ հաղորդվելով խորհրդին այս եկեղեցու, որի պատերից խոսում են սուրբ հայրերը մեր, խոսում է պատմությունը մեր, հոգին է շրջում արիության՝ դիմագրավելու ամեն դժվարություն:

Աղոթում ենք, որ Տերը Իր օրհնության ներքո պահի ջնեաղ ու բարեբեր Բրազիլիան, նրա ասպվածասեր ժողովրդին, որ բաց սրտով ու հյուրընկալորեն ընդունել է ձեր հայրերին և իր պետության բարեխնամ հովանու ներքո ամեն ազատություն ու հնարավորություն ընձեռել ձեզ ապրելու ազգային-հոգևոր կյանքով:

Հայրապետիս աղոթքն է նաև, որ Տերը Իր խնամքի ներքո պահպանի հայ համայնքը, աջակից լինի ձեզ ձեր բոլոր բարի գործերում, հաջողությամբ պսակի ձեր եկեղեցասեր ու հայրենասիրաբար ծրագրերն ու իրագործումները, որոնք նոր հույսեր սիրտ դառնան հույսերով բացված մեր նոր կյանքի մեջ, քանզի այսօր անկախ է Հայաստան մեր երկիրը և ազատագրված Արցախը: Մեր աղոթքն է, որ ձեր զավակունք ձեր ընթացքի հետևողները լինեն, հայ կյանքի ջերմացնողը լինեն Օգասկոյի մեջ, հայ անվան բարձրորեն պահպանողները: Եվ մենք մշտապես գոհություն և փառք առ Աստված բարձրացնենք Իր օրհնության համար, Իր շնորհների համար, որին արժանացնում է մեր հավատավոր ժողովրդին:

Մեր աղոթքն է, որ Բարձրյալն Աստված միշտ աջակից լինի Ձեզ և պարգևի Ձեզ ու Ձեր ընտանիքներին անփոխարինելի բարիքները քաջառողջության, առավել պտղաբեր քահանայագործության և անսպառ երջանկության: Թող Ձեր քահանայագործությունը լինի հոգևոր զորության աղբյուր մեր հավատավոր ժողովրդի համար:

«Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն»:

Եկեղեցուն կից սրահում, այնուհետև, Վեհափառ Հայրապետը հանդիպեց տեղի հայ համայնքի ներկայացուցիչների հետ: Նորին Սրբությանն այստեղ բարիգալստյան խոսքով դիմեց Օգասկոյի հայ համայնքի ատենապետ Արիս Գուջանյանը՝ի մասնավորի ասելով.

Վեհափառ Տէր, մեր մեծ պապերն ու ծնողները Սան Փաուլու ու յատկապէս Օգասքօ հասան 1923-էն սկսեալ, իսկ 1932-ին հանդիսաւորապէս բացումը կատարուեցին տեղւոյս Սուրբ Յովհաննէս Մկրտիչ եկեղեցիին, որը Պրազիլական այս

Академия наук Армянской ССР
Фундаментальная библиотека

աստվածաբանական ատենին առաջին Հայ Առաքելական եկեղեցին է և որու պաշտօնական օծումը կատարեց Տ. Գարեգին արքեպս. Խաչատուրեան, որ ապրի ոչ Կոստանդնուպոլսոյ Պատրիարք դարձաւ:

1930-ական թուականներու ներգաղթող մեր հայրերը ընդլայնեցին գաղութի թիւը, ու միաժամանակ հաստատեցին իրենց տուներուն հիմերը, կառուցեցին հայ դպրոցը, Ազգային Դուրեան Վարժարանը, որպէս մայրենի լեզուի պահապան:

1915-ի ցեղասպանութենէն ճողոպրած իրարայաջորդ սերունդները, այս հեռաւոր ափերուն շարունակեցին իրենց կարևոր դերը՝ պահպանել մեր մշակոյթը, կրօնքը և ընտանիքներու միջև միութիւնը:

Մենք հպարտ ենք Ձերդ Սրբութեան ըսելու, թէ յուզումով, ծափահարութեամբ ու տօնախմբութեամբ այստեղ ընդունեցինք նաև Ամենայն Հայոց երկու Կաթողիկոսները, Երջանկայիշատակ Տ. Տ. Վազգէն Ա Կաթողիկոսը, որ երեք անգամ եկաւ մեզ այցելելու, և Երջանկայիշատակ Տ. Տ. Գարեգին Ա Կաթողիկոսը, որ առիթ ունեցաւ գէթ անգամի մը համար մեր մէջ գտնուելու: Իրենց այցելութիւններուն, անոնք ընդունուեցան Օգասքոյի քաղաքապետներուն կողմանէ, արժանանալով պաշտօնական հիւրի հանգամանքին, ու իբրև խորհրդանիշ ստացան այս ասպնջական ու կոմոբոլիտ քաղաքին բանալին:

Այսօր ևս, պատիւն ունինք, որպէս Օգասքոյի հայ գաղութի Ատենապետ, Ձերդ Սրբութեան ուղղել մեր այս ողջոյնի խօսքը:

Մեզ համար մեծ պատիւ մըն է Ձերդ Սրբութիւնը ընդունիլ մեր տան մէջ: Այս օրէն սկսեալ, Վեհափառ Տէր, Ձերդ Սրբութեան անունը ևս մաս պիտի կազմէ կարևորագոյն անձնաւորութեանց կողքին, որոնք մեզ այցելեցին և բերին մասունք մը մեր Մայր Հայրենիքէն:

Վեհափառ Տէր, Մայր Հայրենիքի հողը, որ կը բերէք կպած ձեր կոշիկներուն, թող միախառնուի այս երկրի օրհնեալ հողին, որ գրկաբաց ընդունեց մեր ազգի տարագիր բեկորները, իսկ այսօր պատիւն ունի ընդունելու Ձերդ Սրբութիւնը:

Բարի եկաք, Վեհափառ Տէր, հազար բարի:

Բարի և օրհնաբեր ըլլայ Ձեր թանկագին ներկայութիւնը մեր մէջ:

Օգասկոյի քաղաքապետ Սելսիո Անտոնիո Ժիլիոն, ողջունելով Վեհափառ Հայրապետին իրենց քաղաք այցելելու առիթով, ասաց, թե հատկանշական է այն իրողությունը, որ հայ է եղել Օգասկոյի առաջին քաղաքապետը՝ այժմ արդեն հանգուցյալ Հրանտ Սանասարը: Քաղաքապետը Հայոց Հայրապետին հանձնեց Օգասկոյի խորհրդանշական բանալին և ընթերցեց քաղաքապետարանի որոշումը՝ մայիսի 8-ը Ամենայն Հայոց Կաթողիկոսի պաշտոնական այցելության օր հռչակելու մասին:

Կեսօրին Վեհափառ Հայրապետն այցելեց ՀԲԸՄ-ի Բրազիլիայի մասնաճյուղ՝ իր գնահատանքը հայտնելով ինչպես ՀԲԸՄ-ի, այնպես էլ աշխարհով մեկ սփռված նրա մասնաճյուղերի ծավալած գործունեությանը:

Նորին Սրբությանն այստեղ բարիգալստյան խոսքով դիմեց ՀԲԸՄ Բրազիլիայի մասնաճյուղի ատենապետ Կարլոս Մատթեոս Տեր-Հարությունյանը՝ ասելով.

Անանախընթաց պատիւ ու յուզմունքի պատճառ է մեզ համար, որ Զերդ Սրբութեան Պրազիլ այցելութեան առիթով, ընդունելիք Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան կեդրոնը այցելելու հրաւէրը, մասնաճիւղիս հիմնադրութեան քառասնամեակին առիթով:

Պրազիլիոյ ՀԲԸ. Միութիւնը, շարունակելով հարիւրամեայ մեր միութեան նպատակները, իր հիմնադրութեան օրէն իսկ պայքարած է հայոց լեզուի ու մշակոյթի պահպանման ի խնդիր, անիւնք կերպով նուիրուելով բարեսիրական, կրթական ու մարզական գործունէութեանց, գիտակից, թէ Սփիւռքահայութեան ապագան երիտասարդներուն կը պատկանի, որոնք պիտի դառնան գաղութային ղեկավարներ: Այս համոզումով է, որ 1984-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութեամբ սկսանք կառուցանել ՀԲԸ. Միութեան Ալեք Մանուկեան կրթական, Ընկերային, Մարզական ու Մշակութային համալիրը, 1986ին աւարտած:

Կը ճանչնանք Զերդ Սրբութեան աշխատանքը Մայր Հայրենիքի մանուկներով ու պատանիներով Սուրբ Սարգիս եկեղեցւոյ ծառայութեան ընթացքին, որու արդիւնքը տեսնելու բարեբախտութիւնը ունեցանք, երբ մեր գաղութը ներկայացաւ Հայաստանի Մանկական երգչախումբը, 1996 թուականին: Յետոյ, որպէս Ամենայն Հայոց Կաթողիկոս, սրտաբաց ընդունելիք Երրորդ համահայկական խաղերու մասնակցող Պրազիլահայ Երիտասարդները ու ղեկավարները, ցուցաբերելով մասնահատուկ համակրանք:

Քսանմէկերորդ դարը մեզմէ անդադար փոփոխութիւններ կը պահանջէ: Հայ Առաքելական Եկեղեցին երջանկութիւնը ունի երիտասարդ հոգևոր ղեկավար մը ունենալու, գիտակից Սփիւռքի դարաձքին ցրուած գաղութներու հարցերուն, որ իմաստաւորէն կ'առաջնորդէք այս հազարամեայ եկեղեցին, պահպանելով աւանդութիւնները ու շարունակաբար յարմարելով արդի աշխարհի կարիքներուն: Զերդ Սրբութեան գործունէութեան ամրապնդումը ընդհանուր գիտակցութիւն կը պահանջէ բոլոր մակարդակներու միջև, որպէսզի կարենանք միասնաբար յաղթահարել մեր բոլոր արգելքները: Շատ են խնդիրները, սակայն հաւատքով Աստուծոյ հանդէպ ու Զերդ Սրբութեան իմաստուն ղեկավարութեամբ, վստահ ենք, թէ պիտի մէկ կողմ ձգենք մեր տարբերութիւնները ի սէր մեր գաղութի ապագային:

Ջերմ մթնոլորտում անցած այս հանդիպմանը սրտի իր խոսքն ասաց նաև Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը:

Անդրադառնալով ՀԲԸ Միության անցած մեծ ճանապարհին և պատմական առաքելությանը մեր ժողովրդի կյանքում, Վեհափառ Հայրապետը մասնավորաբար ասաց. «*Հաստատուելով եգիպտահայ համայնքում, Միությունը կարճ ժամանակում իր ծառայություններով ձեռք բերեց համազգային նշանակություն: Այսօր Մենք անսահման միխիթարությամբ ենք անդրադառնում և գոհություն բարձրացնում եր-*

կիւնք, որ ապրել ու ապրում է և հայ իրականության անբաժան մասն է բարեգործության ոգին»:

Հանդիպումը եզրափակվեց գեղարվեստական հայտագրով, որի ընթացքում հայկական ժողովրդական պարերի նրբին կատարմամբ հանդես եկավ տեղի հայկական դպրոցական պարախումբը:

Նորին Սրբությունն այնուհետև այցելեց Հայ Ակումբ, ուր Վեհափառ Հայրապետին բարիգալստյան խոսք ասաց ակումբի ատենապետ Լևոն Եզեկիելյանը:

Սիամանթոյի «Սուրբ Մեսրոպ» ստեղծագործության «Գյուտին փառքը» հատվածը մեծ ներշնչանքով արտասանեց Անահիտ Ռշյան-Բոյաջյանը՝ դաշնամուրային նվագակցությամբ Սիրվարդ Ավետիսյան-Մոմճյանի:

Հավաքվածներին այնուհետև դիմեց Երևանի Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Վիլեն Հակոբյանը:

Այնուհետև ծավալվեց ջերմ և անկեղծ մի զրույց հավաքված երիտասարդների և Վեհափառ Հայրապետի միջև, որի ընթացքում Նորին Սրբությունը պատասխանեց երիտասարդներին հուզող հարցերին:

Ի պատիվ Վեհափառ Հայրապետի երեկոյան իրենց տանը ընթրիք էին կազմակերպել տեր և տիկին Վարուժան և Տիրուհի Բուրմայանները:

9 մայիսի

Կիրակի առավոտյան Սան Պաուլոյի Ս. Գևորգ հայկական եկեղեցում Հայրապետական Ս. Պատարագ մատուցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

«Հայր մեր»-ից առաջ խոսք ասաց Տաթև Սրբազանը՝ Նորին Սրբությանը խնդրելով հավաքվածներին փոխանցել իր հայրապետական պատգամը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՔԱՐՈԶԸ ՍԱՆ ՊԱՈՒԼՈՒԻ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Սիրելի բարեպաշտ հավատացյալ հայորդիք.

Ահա հինգ օրեր ձեզ հետ ենք, և ամեն օրը նոր ուրախություն ու քաջալերություն հավելեց Մեր հոգուն: Հանդիպումներ ունեցանք եկեղեցական, ազգային և մշակութային հաստատությունների հարկերից ներս: Եկանք ձեզ զորացնելու ու հաստատելու հավատի ճանապարհներին, ազգային մեր արժեքներին հավատարմության մեջ, բայց նաև ինքներս զորեպսեղվեցինք ու միխթարվեցինք՝ տեսնելով հավատավոր, ազգասեր ու հայրենասեր ձեր ընթացքը:

Այսօր առ Աստված գոհության ու փառաբանության մաղթանքն է Մեր հոգում, որ Հայրապետ և հավատավոր ժողովուրդ միասնաբար աղոթքի ենք կանգնել այս սրբազան տաճարի կամարների ներքո՝ հայցելով, որ Տերը խաղաղություն

պարգևի աշխարհին, պահպանի և ազգս հայոց ու զորավիգ լինի մեզ մեր ծառայության մեջ հանդեպ մեր Հայրենիքը և Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին:

Վերապրին, սիրելի ժողովուրդ մեր, բերում ենք ձեզ ողջույն մեր Մայր Հայրենիքից՝ ազատ ու անկախ Հայաստանից: Բերում ենք ձեզ սերը հայրենաբնակ ձեր եղբայրների ու քույրերի, ովքեր համայն հայոց հետ անձկորեն սպասում են այն օրհնյալ օրվան, երբ Տերը շնորհի մեզ համախմբված լինելու հայրենի երկնքի տակ՝ կողք-կողքի ու լծված հայրենաշինությանը: Բերում ենք ձեզ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի սերն ու օրհնությունը, որպեսզի այդ օրհնության ներքո շարունակեք ձեր կյանքի ընթացքը, ապրեք նախնյաց սուրբ հավատքով և զարդարեք ձեր կյանքը ազնիվ ու առաքինի գործերով, որոնցով բարի անունն է հաստատվել ձեր հայրերի և այսօր պիտի շարունակվի ձեր միջոցով՝ հավելելով հարգանքն ու գնահատանքը բրազիլահայ համայնքի հանդեպ:

Սիրելիներ, մեր ժողովուրդը պատմության դժվարին քառուղիներում ուր էլ հաստատվեց ու նոր կյանք սկսեց, միշտ համախումբ մնաց մեր Եկեղեցու շուրջ՝ նրա կանթեղի անմար լույսով տեսնելով դեպի երկինք բարձրացող «գաղտնի ճամփան» և դատապանակիր մեր Արարատի ու Միածնակառույց մեր Սուրբ Էջմիածնի գոյգված պատկերը: Միշտ ապրեց հոգով՝ փրկության հույսով ու Հարության հավատքով, որ վեր են անցողիկ ժամանակների ամենակուլ իշխանությունից և մեզ՝ նվաճումներ, անողոք ասպատակություն, ավեր ու նեղություններ կրած, ցեղասպանություն տեսած «փոքր ածու» ազգիս առաջնորդեցին դեպի այգաբացը այս նոր հազարամյակի՝ իբրև Հայ Առաքելական Եկեղեցի, իբրև Հայոց Պետություն, մեր տեղն ունենալու և մեր ջանքերը բերելու պետությունների ու ազգերի խաղաղ կյանքին:

Եկեղեցին, սիրելի զավակներ, գիտեք, որ Քրիստոսին հավատացյալներիս միությունն է: Իբրև Եկեղեցի, մեր ժողովուրդը ևս իր հավաքական-ազգային սրտի մեջ սրբորեն կրել է Աստվածածնի գրկի մանկանը՝ Աշխարհի Փրկչին ու մեր Տիրոջը, և այս հավատով իր եկեղեցիների Ավագ խորաններին բարձրացրել Աստվածամոր և մանուկ Հիսուսի պատկերները: Մենք առանձնակի սեր ու պաշտամունք ենք տածում Աստվածամոր հանդեպ՝ ճանաչելով ու հայցելով Սուրբ Տիրամոր զորավոր բարեխոսությունը մարդկության ու հայության համար:

Տիրամոր կերպարը անբասիր օրինակ ու ներշնչման աղբյուր է եղել նաև հայ կանանց ու մայրերի համար՝ ապրելու սիրով ու նվիրումով: Այսօր, երբ Բրազիլիո մեջ տոնախմբվում է մայրերի տոնը, Մենք ուրախ ենք, որ անձամբ կարող ենք շնորհավորել ու Մեր բարեմաղթանքները բերել ձեզ, սիրելի հայ մայրեր, և մանավանդ ասել, որ ձեր ձեռքում է մեր ժողովրդի ապագան: Կրթեք ձեր զավակներին անանուանք հավատով, դեպի ազգայինը, դեպի հայ դպրոցը սիրով ու հավատարմությամբ, որոնցով պիտի գտնեն իրենց երջանկությունը, և որոնցով պիտի հարատևի մեր ժողովուրդը:

Սիրելիներ, Մայիսի 9-ը նվիրական օր է նաև մեր աշխարհասփյուռ ժողովրդի համար: Այսօր մենք տոնախմբում ենք Շուշիի ազատագրության հաղթանակը, որ

եկաւ գումարուելու Մայիսյան մեր մեծ հաղթանակներին: Աւարտյրի արեգակը, որ շողաց Մարդարապատում, ու Հայաստանի առաջին Հանրապետությանը ծնունդ տուած Մայիսյան հերոսամարտերում, շողարձակեց կրկին արցախյան երկնամերձ լեռներում: Մենք ցանկանում ենք, որ Մայիսյան հաղթապսակ հորհուրդը ուղեկցի ու լուսավորի ձեր կյանքը՝ բերելով հաղթանակներ կրթական ասպարեզում, հաղթանակներ եկեղեցաշեն ձեր գործերում, հաղթանակներ հայրենանվեր իրագործումներով, և մենք հավատանք, որ աշխարհասփյուռ հայ կյանքը շարունակվելու է միասնական ու հարատև:

Մենք աղոթում ենք, որ Տերը պտղավորի ձեր աշխատանքն ու քրտինքը, որ ներդրվում է համայնքի, Հայրենիքի և Եկեղեցու շինության սուրբ գործի մեջ: Բարձր գնահատանքի Մեր խոսքն ենք բերում համայնքում գործող բոլոր կառույցներին՝ կրթական, մշակութային, բարեսիրական և մարզական, ինչպես նաև ավանդական կուսակցություններին, որոնց անհոգնաբեկ ամենօրյա աշխատանքով աշխույժ ու կենսունակ է պահպանվում հայ համայնքի կյանքը Բրազիլիայում: Մենք տեսանք այն հաջողությունները, որ արձանագրել ենք դուք, և Մեր հոգու ուրախությունը աղոթք դարձավ դեպի երկինք բարձրացող՝ հայցով, որ Աստծո օրհնությունը միշտ ձեզ հետ լինի ու սերը միշտ ձեր մեջ իշխի:

Մասնավոր Մեր գնահատանքն ենք բերում Բրազիլիո հայոց թեմիս բարեջան Առաջնորդ Գերաշնորհ Տ. Տաթև արքեպիսկոպոս Ղարիբյանին: Մենք տեսանք Սրբազան Հոր քաջ և ավելի տարիների նվիրումի ու ծառայության բարի արդյունքն ու վաստակը: Գնահատանքի Մեր խոսքն ենք ուղղում նաև համայնքային վարչության Ատենապետ Տիար Անդրանիկ Մանիսաջյանին, ով անհողդողդ կամք ու ջանքեր է նվիրում՝ պայծառ պահելու, շեն ու բարեզարդ դարձնելու եկեղեցապատկան բոլոր կառույցները: Մեր գնահատանքն ենք բերում Տիար Ներսես Վարդանյանին, Վարուժան Բուրմայանին, Անդրանիկ Քըսաճըզյանին, նրանց ծնողաց, բոլոր բարեպաշտ հայորդյաց, որոնց ազնիվ զոհաբերություններով ու ծառայություններով, ահա, շենացել է Բրազիլիայի հայ գաղութը տասնամյակների ընթացքում, կառուցվել է այս պայծառատես եկեղեցին, դպրոց, ազգային կառույցներ, որոնք Մենք այցելեցինք և տակավին կառույցներ ու շինություններ, ուր չհասցրեցինք այցելել:

Թող Աստված զորացնի հավատը ձեր հոգիներում և բարի արգասավորում պարգևի ձեր գործերին: Թող աղոթքով լեցուն լինի Սուրբ Գևորգ եկեղեցին և լուսով ու շինությամբ՝ ազգային ձեր հաստատությունները, սիրով՝ ձեր հոգիները, որ ապրեք ու գործեք միասնաբար և այսպես ջերմորեն ընդառաջ ելնեք ձեր Հայրապետներին իրենց այցելությունների ընթացքում:

Շնորհակալ հոգով Մեր գնահատանքն ենք բերում նաև Բրազիլիայի պետությանը, մեր այցելած Սան Պաուլու և Օքասկո քաղաքների իշխանություններին, և օրհնում ենք այս աստվածատեր երկրի ողջ ժողովրդին:

Մնացեք խաղաղությամբ և մնացեք սիրով: Քրիստոնեական ամենահաղթ սիրո շաղախը թող լինի զորավիգը ձեր կյանքի և ձեր գործերի, և մենք միշտ առիթը

ունենանք օրհնելու զԱստված իր բոլոր բարիքների համար, որ մեզ բաժին է դարձնում այսօր և միշտ և հավիտյանս. ամեն:

Ի գնահատություն իրենց ծառայության՝ Վեհափառ Հայրապետը Տաթև Սրբազանին նվիրեց ձեռաց խաչ, իսկ Տ. Եզնիկ և Տ. Պետրոս քահանաներին շնորհեց Ծաղկյա փիլոն կրելու իրավունք:

Հայրապետական Պատարագի ամպհովանակիրներն էին գաղութի ճանաչված դեմքերից Բրազիլահայոց թեմի ներկայացուցչական ժողովի ատենապետ Անդրանիկ Մանիսաճյանը, Անդրանիկ Քըսաճըգյանը, Ներսես Վարդանյանը և Վարուժան Բուրմայանը:

Սուրբ Պատարագի ավարտից հետո Հայոց Հայրապետը Սան Պաուլուի Արմենիա հրապարակում ծաղկեպսակ զետեղեց Հայ նահատակաց հուշարձանին և երկինք աղոթք վերառաքեց մեր բյուրավոր նահատակների հոգիների համար:

Կեսօրին Վեհափառ Հայրապետն Առաջնորդարանում հանդիպեց համայնքային կազմակերպությունների ներկայացուցիչներին: Բրազիլիայի հայոց թեմին տրված Հովվապետական անդրանիկ այս այցելության ավարտին Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց նրանց, իրենց ծավալած ազգային-եկեղեցական գործունեության համար՝ մաղթելով միշտ առաջնորդվել համերաշխության և միասնականության ոգով:

Հայոց Հայրապետի մեկնելու առիթով երեկոյան իրենց բնակարանում ողջերթի ընթրիք էին կազմակերպել տեր և տիկին Անդրանիկ և Աստղիկ Քըսաճըգյանները:

Հաջորդ օրը, առավոտյան ժամը 10.30-ին, Վեհափառ Հայրապետի գլխավորած պաշտոնական արարողությունը Սան Պաուլուից մեկնեց Մոնտեվիդեո: Վեհափառ Հայրապետին օդանավակայանում ճանապարհեցին Հայաստանի Հանրապետության հյուպատոսության և գաղութահայ տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչները՝ առաջնորդ Տաթև արքեպիսկոպոս Ղարիբյանի գլխավորությամբ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՅՑԸ ՈՒՐՈՒԳՎԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

(10–13 մայիսի)

10 մայիսի

Ավարտելով հովվապետական իր անդրանիկ այցելությունը Բրազիլիայի հայոց թեմ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մայիսի 10-ին Սան Պաուլուից ժամանեց Մոնտեվիդեո:

Մոնտեվիդեոյի միջազգային օդանավակայանում Ամենայն Հայոց Հայրապետին դիմավորեցին ավանդական աղ ու հացով: Գլխավորությամբ Ուրուգվայի հայոց թեմի առաջնորդ Հակոբ արքեպիսկոպոս Գըլընճյանի, օդանավակայան էին եկել ուրուգվահայ համայնքի տարբեր կազմակերպությունների և պետական իշխանությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև Բուենոս Այրեսից եկած արգենտինահայերի պատվիրակությունը:

Նորին Սրբությունը նախ այցելեց Ուրուգվայի Անկախության հրապարակ և ծաղկեպսակ դրեց Հանրապետության ազատարար զորավար Խոսե Արտիգասի հուշարձանին: Այնուհետև հայրապետական շքախումբն առաջնորդվեց Մոնտեվիդեոյի Արմենիա հրապարակ, ուր գտնվում է ուրուգվահայերի կանգնեցրած հուշարձանը՝ թևաբեկ արծիվ, որի բեկված թևը խորհրդանշում է Արևմտյան Հայաստանը:

Վեհափառ Հայրապետին այստեղ բարիգալստյան խոսքով դիմեց Ուրուգվայի հայոց թեմի առաջնորդ Հակոբ արքեպիսկոպոս Գըլընճյանը.

Վեհափառ Տեր.

Այսօր, այս պահուն, մենք սրբազան հուզումով և անհուն ուրախությամբ հավաքված ենք այստեղ՝ բարի գալուստ մաղթելու Ձերդ Սրբության, որովհետև Դուք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհապանծ բարձունքներեն այցի կուգաք հեռավոր այս ափերն ապրող հայորդիներուն, Ձեր հավատացյալ զավակներուն: Արդարև, այս պահը նվիրական է և պատմական, քանզի Դուք մեզ կբերեք Ձեր հայրապետական օրհնությունը, հորդորներն ու խրատները՝ ի խնդիր մեր միասնականության ապահովման և մեր ազգային ու հոգևոր կյանքի ամրապնդման:

Ուրուգվայի մեր համայնքը, համեմատած Սիդնեյի այլ համայնքներուն, հավանաբար ավելի փոքրաթիվ է, սակայն համայնքի հոգին մեծ է և սիրտը՝ լայն, որովհետև այս սերունդի հայրերը և մեծ հայրերը, որոնք փրկվեցան Հայկական ցեղասպանության արհավիրքներեն, եկան-հասան այս հյուրընկալ երկրին մեջ և առաջին հերթին իրենց աղոթքին տունը կառուցեցին՝ այս շքեղ սրբազան տաճարը, ասկե հետո հիմնեցին վարժարաններ, հայկական կազմակերպություններ և այսպիսով և այս բոլորը թողուցին այսօրվան սերունդին, և այսօրվա սերունդն ալ այս բոլորը պիտի պահպանե այն բարձրության վրա, որ թողու-

ԴԻՄԱՎՈՐՈՒՄ ՄՈՆՏԵՎԻԴԵՈՅՈՒՄ

Հայաստանի Գրականության և արվեստի թանգարան

ԱՐՄԵՆԻԱ ՀՐԱՄԱՐԱԿՈՒՄ

ցին իրենց նախնիք, որպեսզի կարենանք մենք այս երկրին մեջ պահպանել մեր ազգային ու հոգևոր կյանքը:

Մեր համայնքը միշտ կարիք ունի, օգնության կարիք ունի մեր Մայր Հայրենիքին և Հայաստանին ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին: Ու Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետները միշտ իրենց գորգուրանքին առարկան դարձուցած են մեր Ուրուգվային այս համայնքը, և Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Երկրորդ Վեհափառ Հայրապետը հինգ տարիներն ի վեր բազմելով Սուրբ Գրիգոր Լուսավորչի գահին՝ ոչ միայն Հայաստանին մեջ ծավալած է իր գործունեությունը, այլ նաև ամբողջական բոլոր համայնքներուն կյանքով, ապրելակերպով մոտիկեն հետաքրքրված է:

Մենք այստեղ երջանիկ ենք, որ մեզի համար մեր հայրենիքին մեջ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Իջման Ս. Սեղանին առջև ունինք մեկը՝ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, որ մեր երջանկության համար բազուկները կրարձած և կաղոթե: Եվ այսօր մենք՝ իր որդիները, որ անձամբ պատիվ ունինք, հպարտություն ունինք, երջանկության այս առիթն ունինք տեսնելու զինք այստեղ, ընդունելու զինք այս սրբազան տաճարին մեջ, մեր ուխտը պետք է վերանորոգենք Աստուծո և Վեհափառ Հոր առջև՝ ըսելու, թե պիտի շարունակենք ընթանալ այն ճամփայեն, որ գծեցին մեր նախնիք, մեր հայրերը, անոնց արժանի զավակները պիտի դառնանք: Եվ այնքան ատեն, որ մեր հայացքը կուղղենք դեպի մեր հավատքի կենտրոնը՝ Ս. Էջմիածին, այնքան ատեն, որ մենք կնայինք մաքրամաքուր գագաթին մեր Արարատ լեռան, այնքան ատեն մենք կգոյատևենք իբրև հայ, և իրավունք կունենանք ըսելու բանաստեղծին խոսքերը, թե՝ «Կանք, պիտի լինենք ու դեռ շատանանք»:

Վեհափառ Տեր, օրհնեցեք մեզի և վստահ եղեք, որ բոլորս ալ միասին աշխատեցանք, որպեսզի արժանավայել ընդունենք Ձեզ, և Դուք գաք այստեղ և մաղթեք մեզի Ձեր օրհնությունը:

Խոնարհաբար կիրավիրենք Ձերդ Սրբությունը տալու մեզի Հայրապետական Ձեր պատգամը:

Հավաքվածներին այնուհետև հայրապետական իր պատգամն ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունը շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար՝ արտահայտելով նաև իր գնահատանքը Ուրուգվայի իշխանություններին՝ հայ համայնքի հանդեպ տածած հոգատար վերաբերմունքի համար, շեշտելով հատկապես այն իրողությունը, որ Հայկական ցեղասպանությունն աշխարհում առաջինը պաշտոնապես դատապարտել է Ուրուգվայը: Նորին Սրբությունն ի մասնավորի ասաց.

Համայն հայոց հոգևոր Կենտրոնից օրհնություն ենք բերել Ուրուգվայի ասպվածասեր երկրին ու ժողովրդին, որը ոչ միայն իր տան ու հոգու դռները բացեց մեր ժողովրդի տարագիր զավակաց հանդեպ, այլև առաջինը ճանաչեց անցնող դարասկզբին իրականացված Հայոց Ցեղասպանությունը: Խորը զգացվածությամբ երախտագիտության Մեր խոսքն ենք ուղղում Ուրուգվայի պետությանը, որ

բարեկամի ցավակից սրտով բողոքի իր ձայնը բարձրացրեց հայ ժողովրդի հանդեպ գործադրված ոճրագործության դեմ: Մեր աղոթքն է, որ Բարձրյալ Տերը Իր խաղաղության ու շնորհի ներքո պահպանի Ուրուգվայը և օրհնի նրա ժողովրդի ջանքերը՝ հանուն իր երկրի բարգավաճման ու առաջընթացի:

Սիրելի հայորդիներ: Աշխարհացրիվ ենք ապրում, մեզ բաժանում են երկրներ, լեռներ և օվկիանոսներ, բայց միասնական ենք Սուրբ Էջմիածնով ու Հայաստանով, միասնական՝ երեկ, այսօր ու հավիտյան: Այս է մեր հավատն ու հույսը առ Աստված. Ով խնամեց մեզ ու պահպանեց փորձությունների ու մահերի մեջ և այսօր պարգևում է հոգևոր-ազգային վերազարթյալ կյանքի, միասնական կյանքի նոր հույսեր: Թող այդ հույսերը վառ լինեն մեր ժողովրդի հոգում, ձեզանից յուրաքանչյուրի հոգում, զորանան ազգասիրությամբ ու հայրենասիրությամբ, ու մենք պիտի հավատանք հայ կյանքի արծվաթռիչ հաղթանակներին, հայոց գալիքին:

Հայոց Հայրապետը դրվատանքի խոսքով և օրհնությամբ հիշեց հանգուցյալ Հարություն Ռուբինյանին, ում բարերարությամբ կառուցվել է հայկական այս հուշարձանը Արմենիա հրապարակում:

Երեկոյան ժամը 19-ին Վեհափառ Հայրապետը «Հրաշափառ»-ով մուրք գործեց Մոնտեվիդեոյի Ս. Ներսես Շնորհալի եկեղեցի, որի հիմնարկեքը կատարվել է 1964 թ., իսկ օծումը՝ հաջորդ տարի:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՄՈՆՏԵՎԻԴԵՈՅԻ Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Սիրելի բարեպաշտ հավատավոր հայորդիներ.

Գոհություն և փառք ենք վերառաքում Բարձրյալ Տիրոջը, որ շնորհեց Մեզ այս առիթը՝ հովվապետական Մեր անդրանիկ այցելությունը կատարելու Ուրուգվայում ապրող մեր Եկեղեցու բարեպաշտ զավակներիդ և այսօր Սուրբ Ներսես Շնորհալի յուսամիտ մեր Հայրապետի անունը կրող այս հրաշակերտ եկեղեցում ձեզ հետ միասին աղոթելու հանուն աշխարհում խաղաղության, հանուն ամենուր մեր ժողովրդի ապահով ու երջանիկ, հավատով զորացյալ կյանքի:

Սիրելիներ, ծանոթ ենք ուրուգվայահայության անցած ուղուն և գիտենք, թե ինչպիսի դժվարին օրեր է ապրել այստեղի հայ գաղութը, քաջատեղյակ ենք, թե ինչպիսի փորձություններ են դիմագրավել տարագիր մեր ժողովրդի զավակները, ձեր հայրերը: Սակայն միևնույն ժամանակ, հայտնի է, թե մեր ժողովրդի աշխատասեր զավակները ինչպիսի քաջությամբ և տոկունությամբ կարողացան հաղթահարել բոլոր արգելքներն ու խոչընդոտները և կազմակերպել իրենց բա-

որ, արժանավայել կյանքը՝ կառուցված քրիստոնեական արժեքների, մեր հայրերի ավանդների վրա:

Աշխարհացրիվ մեր ժողովուրդը ինչպես ամենուր, այս դեպքում ևս իր կյանքով վկայեց, որ հայությունը կոչված է հարության խորհրդով ապրելու՝ հոգում աղոթքը, հույսն ու սերը, շուրթերին՝ իր Այբ, Բեն, Գիմ-ը: Այդ են վկայում այս սպիծառ եկեղեցին, ձեր կրթական հաստատությունները, մշակութային և բարեսիրական կազմակերպությունները և դուք, սիրելի հավատավոր հայորդիք, դուք, որ հոգեցունց խանդավառությամբ եք դիմավորում ու ողջունում ձեր Հայրապետին:

Բարի ապաստանով ենք Հայաստան աշխարհից ճամփա ելել դեպի Հարավային Ամերիկա: Հանուր հայության հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնից բերել ենք ձեզ սեր և օրհնություն, բերել ենք վերանկախացյալ մեր Հայրենիքի և ազատագրված Արցախի նոր կյանքի շունչը, բիբլիական Արարատի ազատ ու վեհ սպիտակները, որպեսզի առավել հաստատուն լինեք հարության լույս հավատքի մեջ:

Արդի ժամանակների հրամայականների առջև էլ, ինչպես դարերի փորձությունների մեջ, մեր ճանապարհն անսայթաք կլինի, անկորուստ ու պտղաբեր, երբ ամուր պահենք մեր հավատքը և հավատարմորեն պահպանենք մեր հայրերի ժառանգությունը: Հոգո՛վ է կերտվել այն, ավանդվել մեզ՝ հույսով, սիրով ու հավատարմությամբ և առաջնորդում է դեպի բարձունքներ ու հաղթանակներ: Հայ Եկեղեցին այդ հարուստ ու թանկ ժառանգության անհուն գանձերը բաշխում է աշխարհասփյուռ իր զավակներին, որ միշտ լինեն Աստծո հետ ու մնան հավատարիմ իրենց արմատներին: Այս է մեր նախնյաց պատգամը մեզ: Այս է նաև Մեր իղձը և փափագը և այս մտածումով ու ապրումով աղոթեցինք Իշման Ս. Սեղանի առջև ու ճանապարհվեցինք Հարավային Ամերիկա:

Այսօր խիզդով է լեցուն Մեր հոգին՝ տեսնելով ձեզ համախումբ ու միասնական մեր Եկեղեցու շուրջ: Մեր բարձր գնահատանքն ենք բերում սիրելի Առաջնորդ Սրբազանին՝ Գեղաշնորհ Հակոբ արքեպիսկոպոս Գըլընճյանին, եկեղեցական վարչականներին, ովքեր իրենց բոլորանվեր ծառայությամբ Մեր զավակաց հոգիներում միշտ վառ են պահում Լուսավորիչ Հայրապետի անմար կանթեղի կենսատու լույսն ու ազգասեր ոգին: Գիտենք, սիրելիներ, որ դյուրին չէ ձեր ծառայության ճանապարհը, և Մեր աղոթքն է, որ Տերը զորակից լինի ձեզ ձեր նվիրյալ սպասավորության մեջ և օրհնի ձեր բոլոր ազնիվ ջանքերը:

Սիրելիներ, ուրախություն ենք ապրում, որ Ուրուգվայում ձեր ազնիվ ու պարկեշտ կյանքի, շինարար ու ստեղծարար ոգու մասին վկայում է Ուրուգվայի աստվածասեր ժողովուրդը՝ ձեր նկատմամբ ունեցած իր վստահությամբ և իր եղբայրության ջերմ զգացումներով, ինչպես նաև երկրի իշխանությունները՝ ձեր հանդեպ ցուցաբերված բարձր գնահատանքով: Ջերմ ընդունելությունն ու վերաբերմունքը, որին հանդիպեցինք Մենք Ուրուգվայի իշխանությունների կողմից օրանավակայանում վայրէջք կատարելու առաջին պահից, Մենք ընկալում և ընդունում ենք որպես արձագանք Ուրուգվայի հանդեպ ձեր սիրո, նվիրումի և հավատարմության:

Շնորհակալության Մեր խոսքն ենք ուղղում Ուրուգվայի իշխանություններին ու ժողովրդին իրենց բարյացակամ վերաբերմունքի համար, որ ամեն հնարավորություն ստեղծում են, որպեսզի օրհնյալ այս երկրի մեջ կարողանաք ապրել ազգային-հոգևոր լիարժեք կյանքով: Մեր աղոթքն է առ Աստված, որ Տերը օրհնի հյուրընկալ այս երկիրը և միշտ խաղաղության և բարօրության մեջ պահի նրա ողջ ժողովրդին: Մեր սրտի փափագն է, որ ձեր հոգու հայացքը, սիրելի հայորդիք, միշտ սևեռված լինի Մայր Հայրենիքին, մեր նվիրական հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, որպեսզի շարունակեք ապրել մեր լույս հավատքի կենդանաբար զորությամբ և մեր ազգային անփոխարինելի ու անանց արժեքներով, որպեսզի ձեր հոգում վառ պահեք ազգասիրությունն ու հայրենասիրությունը:

Աղոթքով և առ Աստված հայցով խնդրում ենք Երկնավորի շնորհը, սերը և խաղաղությունը, որպեսզի լինեն միշտ ձեզ հետ և առաջնորդեն ձեր կյանքի բոլոր ճանապարհները:

11 մայիսի

Առավոտյան Վեհափառ Հայրապետն այցելեց Մոնտեվիդեոյի քաղաքապետարան:

Վեհափառ Հայրապետն այնուհետև այցելեց Ուրուգվայի հայոց թեմի հովանավորությամբ գործող Ներսիսյան ամենօրյա վարժարան, որը նաև մանկապարտեզ և նախակրթարան է: Նորին Սրբությունն այստեղ հանդիպեց վարժարանի սաներին և ուսուցչական կազմին: Աշակերտների կողմից պատրաստված գեղարվեստական հայտագրից հետո Հայոց Հայրապետը մտերմիկ և անմիջական զրույց ունեցավ այստեղ սովորող երեխաների հետ:

Ժամը 16.00-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսը երկրի նախագահական նստավայրում հանդիպեց Ուրուգվայի Հանրապետության նախագահ Խորխե Բարժե Իբանիեզին: Ծավալված զրույցի ընթացքում Հայոց Հայրապետը բարձր գնահատեց Ուրուգվայի իշխանությունների հոգածությունը հայ համայնքի և Հայոց Եկեղեցու հանդեպ: Փոխադարձաբար կարևորվեց բազմազգ երկրում ազգային-մշակութային արժեքների պահպանումը և փոխհարստացումը: Ուրուգվայի նախագահը Հայոց Հայրապետին նաև շնորհակալություն հայտնեց իրենց երկիր կատարած այս այցելության համար՝ ասելով, որ երկրի իշխանությունների կողմից Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայտարարված է պաշտոնական հյուր: Նշվեց, որ այս հանդիպումը ևս իր կարևոր նպաստը պիտի բերի Հայաստանի և Ուրուգվայի միջև դիվանագիտական հարաբերությունների հետագա ընդլայնմանը և զորացմանը:

Վեհափառ Հայրապետն այնուհետև ուղևորվեց դեպի Հայ Ցեղափոխական Դաշնակցության Վռամյան ակումբ: Ճանապարհի երկու կողմերում կանգնած երեխաները Նորին Սրբությանը դիմավորեցին աղավնիներ երկինք բաց թողնելով, սկաուտները՝ աղ ու հացով:

Երեկոյան Հայոց Հայրապետը հանդիպեց հայ համայնքի ներկայացուցիչներին՝ համայնքային տարբեր կառույցները ներկայացնող հայորդիներին հորդորելով պահպանել ու առավել զորացնել միասնականության իշխող ոգին:

12 մայիսի

Առավոտյան Վեհափառ Հայրապետն այցելեց հայկական ծերանոց: Այստեղ ուրուգվահայ մի խումբ բարեպաշտ կանայք նվիրումի ոգով խնամում են հայ տարեցներին:

Նորին Սրբությունը Հայրապետական իր օրհնությունը բերեց ներկաներին և բարձր գնահատեց ծերանոցին իրենց հոգածությունը բերողների քրիստոնեական ճշմարիտ ծառայասիրության ոգին:

Այնուհետև Նորին Սրբությունը հյուրընկալվեց ՀԲԸՄ Նուբարյան վարժարանում: Հայ մանուկներն իրենց Հայրապետին դիմավորեցին երգ ու պարով: Վարժարանի սաներին և ուսուցչական կազմին ողջունեցին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը և Երևանի բժշկական համալսարանի ռեկտոր Վիլեն Հակոբյանը: Բժշկական ինստիտուտի ռեկտորն իր հիացմունքը և գնահատանքը հայտնելով հեռավոր այս ափերին հանուն հայապահպանության մղվող ջանքերին և հայապահպանության գործում մեծապես կարևորելով հայրենիքում բարձրագույն կրթություն ստանալը՝ ասաց, որ Երևանի Բժշկական պետական համալսարանը պատրաստ է իր հարկի ներքո ընդունելու Հարավային Ամերիկայի այն երիտասարդներին, ովքեր կցանկանան իրենց ուսումը շարունակելու այս հաստատությունում:

Հանդիպման ավարտին հավաքվածներին իր խոսքն ուղղեց Հայոց Հայրապետը՝ հորդորելով մանուկների հոգում առավել ջանադրաբար սերմանել սերը և նվիրվածությունն առ մայրենին, Մայր Հայրենիքը և Մայր Եկեղեցին՝ ասելով. *«Ավետարանում կարդում ենք. «Ուր գանձք ձեր են, անդ եւ սիրտք ձեր եղիցին» (Մատթ. Զ 21): Սիրելիներ, ամեն երեխա իր ծնողի գանձն է, բայց նաև գանձն է մեր ազգի, և մեր սրտերը մեր այդ ամենաթանկ գանձերի հետ են, որ ապագան են մեր: Նրանց պիտի կրթենք հայրենյաց ժառանգությամբ, հավատով, ազգի սիրով ու Հայրենիքի սիրով, որ լինեն արժանավոր զավակները հայ ազգի ու միաժամանակ՝ արժանավոր զավակները Ուրուգվայի»:*

Օրվա երկրորդ կեսին Նորին Սրբությունն այցելեց Սոցիալ-Դեմոկրատական Հնչակյան Կուսակցության Ուրուգվայի մասնաճյուղ՝ հանդիպման ընթացքում մեկ անգամ ևս կարևորելով հայկական ավանդական երեք կուսակցությունների համատեղ գործունեությունը հանուն մեր ազգային ծրագրերի իրականացման:

Երեկոյան Հայոց Հայրապետը հանդիպեց Ուրուգվահայ համայնքի տարբեր կազմակերպությունների և կառույցների ներկայացուցիչների հետ, ապա մասնակցեց ի պատիվ իրեն տրված ողջերթի ընթրիքին և հաջորդ առավոտյան մեկնեց Արգենտինա:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

(13-24 մայիսի)

13 մայիսի

Ավարտելով Ուրուգվայի հայոց թեմին տրված այցելությունը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մայիսի 13-ի առավոտյան Մոնտեվիդեոյից ժամանեց Բուենոս Այրես: Օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Արգենտինայի հայ համայնքի համազգաղութային հանձնախմբի անդամները և բազմաթիվ արգենտինահայեր՝ գլխավորությամբ Արգենտինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գիսակ արքեպիսկոպոս Մուրադյանի:

Նորին Սրբությանը դիմավորելու էին եկել նաև Արգենտինայում Հայաստանի Հանրապետության դեսպան Արա Այվազյանը, Արգենտինայի Արտաքին գործոց նախարարության կրոնի հարցերով քարտուղար Կիժերմո Օլիվերին, փոխքարտուղար Հնկտոր Մասկելերոն, կրոնի քարտուղարության տնօրեն Խորխե Ալգայրերին:

Վեհափառ Հայրապետն օդակայանից մեկնեց Կորդոբա, ինչպես նախատեսված էր Հայրապետական այցելության ծրագրով:

Կորդոբան, որն Արգենտինայի երկրորդ քաղաքն է իր մեծությամբ, գտնվում է Բուենոս Այրեսից 800 կիլոմետր արևմուտք: Այստեղ ապրում են 5000 հայեր, որոնք ունեն իրենց եկեղեցին, դպրոցը և համայնքայն տարբեր կառույցները: Կորդոբայի հայոց հոգևոր հովիվն է Տ. Սասուն ծ. վրդ. Զմրուխտյանը:

Հայրապետական շքախմբին Կորդոբա ուղեկցեցին թեմական առաջնորդ Գիսակ Սրբազանը, թեմի հոգևոր սպասավորներից Տեր Եղիշե քահանան և ՀՀ դեսպան Արա Այվազյանը:

Ժամը 13.00-ին Վեհափառ Հայրապետը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Կորդոբայի Ս. Գևորգ եկեղեցի, ուր բարիգալստյան խոսքով Նորին Սրբությանը դիմեց թեմական առաջնորդ Սրբազան Հայրը:

Եկեղեցում հավաքացյալ հայորդիներին, այնուհետև, իր պատգամն ուղղեց Հայոց Հայրապետը.

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԿՈՐԴՈՒԱՅԻ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Սիրելի Սրբազան,

Սիրելի քահանա հայրեր, եկեղեցական վարչականներ,

Սիրելի ժողովուրդ.

Երկար ճանապարհ անցանք և այսօր սիրով ու կարոտով, իանդավառ հոգով ողջունում ենք ձեզ՝ հարազատ, հավատարիմ զավակներիդ մեր Եկեղեցու: Եկել ենք Հայաստանից, բայց այսօր այստեղ Հայաստանը ձեր հայացքներում ենք տեսնում: Եկել ենք Սուրբ Էջմիածնից, և այժմ Սուրբ Էջմիածինը տեսնում ենք ձեր հոգիներում, հավատավոր, հայրենասեր ձեր հոգիներում, որով հավաքվել եք այս Տաճարում՝ դիմավորելու Հայոց Հայրապետին և միասնաբար աղոթք երկինք բարձրացնելու:

Փառք Աստծուն, որ պարգևեց մեր հանդիպման այս ուրախ օրը, որի պայծառ հուշն այսուհետ մնալու է մեր հոգում՝ ինչպես երբեք ապրած ամենասրբազան օրերից մեկը:

Արդարև, դժվար է արտահայտել այն զգացումը, որ այսօր համակել է Հայրապետին հոգին, քանզի հավատի այն վեմի վրա, որ 1700 տարիներ առաջ դրվեց Սուրբ Գրիգոր Լուսավորչի ձեռքով՝ իբրև վավերական վկայություն հայոց քրիստոնեական հավատքի, հաստատուն ենք տեսնում ձեզ այսքան հեռու Հայաստանից ու Սուրբ Էջմիածնից: Սրբազան Հոր կողմից շատ ենք լսել Արգենտինայի հայ համայնքի մասին, տեղյակ ենք ձեր նախանձախնդրությանը ազգային կյանքի հանդեպ, ձեր հավատարմությանը նախնյաց ավանդներին, մեր մշակույթին: Ահա Հայրապետական անդրանիկ այցելությամբ եկանք մոտից ճանաչելու ձեզ, տեսնելու այն ամենը, ինչի մասին սիրով և ուրախությամբ պատմել է ձեր բարեջան Առաջնորդը, եկանք ձեզնով քաջալերվելու:

Աշխարհասփյուռ իր բոլոր զավակներով է զորավոր ու պայծառ Հայ Եկեղեցին: Հայրապետական անդրանիկ Մեր այցելությունը կատարելով Հարավային Ամերիկայի հայ համայնքներ, եղանք Բրազիլիայի Սան Պաուլու քաղաքում: Այնտեղ ավելի փոքրաթիվ հայ համայնք ունենք, որը ձեզ պես իանդավառ դիմավորեց Մեզ, և միասին ոգեշունչ օրեր ապրեցինք: Քրիստոնեական մեր հավատը և հավատարմությունը Հայ Եկեղեցուն այն անհաղթ ուժն են, որ շաղկապում ու միասնական են պահպանում մեզ՝ սփռված աշխարհի բոլոր կողմերում: Պահպանում են զարմանալի ու հրաշագործ զորությամբ, որն ամփոփում է մեր գոյության խորհուրդը՝ դարերի մեջ, բազմաթիվ փորձությունների բովով, բեկոր առ բեկոր, բայց Արարատի ու Սուրբ Էջմիածնի դրոշմով՝ մեկ ամբողջություն:

Ինչպես էլ փոխվեն ժամանակները, և փոխվելու են, մնայուն են քրիստոնեության բերած հավիտենական ճշմարտությունները և փրկության հույսը, որ միշտ փնտրելու է մարդկային հոգին: Մնայուն է այն ժառանգությունը, որը թողել են

մեզ մեր նախնիք. և որն այսօր պիտի օգնի մեզ ապրելու ու երջանիկ լինելու. հավատալու. որ Աստծո օրհնությունը մեզ հետ է:

Սիրելիներ. վերստին ջերմագին ողջունում ենք ձեզ ամենքիդ և աղոթք բարձրացնում երկինք. որ Տերը խաղաղ ու բարօր պահպանի Արցախինայի օրհնյալ հողը. նրա ողջ ժողովրդին և հայ համայնքը:

Թող Տիրոջ սերն ու շնորհները մեզ հետ լինեն և բոլորի. ամեն:

Աջահամբույրից հետո եկեղեցուն կից սրահում տրվեց համայնքային ճաշկերույթ, որի ընթացքում Կորդոբայի քաղաքապետի անունից բարիգալստյան խոսք ասաց քաղաքապետարանի միջազգային հարաբերությունների պատասխանատու Կառլոս Հայրապետյանը:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը հանդիպեց Ս. Սահակ–Ս. Մեսրոպ ազգային վարժարանի աշակերտության և ուսուցչական կազմի հետ՝ այստեղ ևս հորդորելով հավատարիմ մնալ ազգային հոգևոր մեր ավանդական արժեքներին:

Երեկոյան Նորին Սրբությունը Պագրճյան սրահում հանդիպեց համայնքային և տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներին:

14 մայիսի

Առավոտյան Վեհափառ Հայրապետը հանդիպեց Կորդոբայի նահանգապետ Խոսե Մանուել Պեյա Սոտային, ապա և քաղաքապետ Լուիս Խոնեսային: Քաղաքապետը Նորին Սրբությանն ասաց, որ քաղաքապետարանի հատուկ որոշմամբ Հայոց Հայրապետը հրոչակված է Կորդոբայի պատվավոր հյուր:

Այնուհետև տեղի ունեցավ մամուլի ասուլիս: Վեհափառը նախ պատասխանեց լրագրողների հարցերին, ապա ներկայացրեց Հարավային Ամերիկա իր հովվապետական անդրանիկ այս այցի նպատակները՝ անդրադառնալով նաև Հայոց Եկեղեցու պատմությանը և ներկա առաքելությանը:

Երեկոյան ի պատիվ Վեհափառ Հայրապետի տրվեց համայնքային ճաշկերույթ:

15 մայիսի

Վեհափառ Հայրապետն առավոտյան այցելեց Կորդոբայի Կաթոլիկ և Հույն Ուղղափառ եկեղեցիներ:

Կեսօրին Հայոց Հայրապետը հանդիպեց կորդոբահայ երիտասարդության հետ՝ հանդիպման ընթացքում անդրադառնալով օտարության մեջ ապրող հայ երիտասարդների ազգային-հոգևոր ինքնության պահպանության խնդիրներին: Նորին Սրբությունը բարձր գնահատեց երիտասարդների համախմբվածությունը, նրանց հայապահպան գործունեությունը և, դիմելով երիտասարդներին, առաջարկեց ուխտագնացություն կազմակերպել դեպի Հայաստան:

Այնուհետև Վեհափառ Հայրապետն այցելեց Հայ Ցեղափոխական Դաշնակցության Անդրանիկ ակումբ, ապա և՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Կորդոբայի մասնաճյուղ:

Երեկոյան Վեհափառ Հայրապետը քաղաքում մշակութային շրջագայության շրջանակում ծանոթացավ տեղի ժողովրդի և բնիկների մշակույթին և ազգագրությանը:

16 մայիսի

Առավոտյան Հայրապետական թափորով և «Հրաշափառ»-ի երգեցողությամբ Նորին Սրբությունն առաջնորդվեց Կորդոբայի Ս. Գևորգ հայոց եկեղեցի, ուր բազմաթիվ հավատացյալներ էին հավաքվել՝ մասնակցելու Հայրապետական Ս. Պատարագին, ստանալու Հայոց Հայրապետի օրհնությունը և լսելու իրենց ուղղված հայրապետական պատգամը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԿՈՐԴՈԲԱՅԻ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(16 մայիսի 2004 թ.)

«Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի Քո անշարժ պահեա եւ զերկրպագուս անուանդ Քում պահեա ի խաղաղութիւն»:
(Շարակնոց)

Միրելի բարեպաշտ հայորդիներ.

Գոհություն ենք հայտնում Աստծուն, որ Մեզ առիթը շնորհեց զգալու այն ջերմ սերն ու հավատարմությունը, որ ունեք ձեր սրտերում հանդեպ Մայր Հայրենիքը, Մայր Եկեղեցին ու Հայոց Հայրապետը: Մեծ է Մեր ուրախությունը՝ տեսնելով ձեզ այսքան մեծ թվով հավաքված Կորդոբայի Սուրբ Գևորգ եկեղեցում՝ համախումբ հոգևոր ձեր առաջնորդի շուրջ: Քաջալեր հոգով կրկին հայցում ենք. «Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի Քո անշարժ պահեա եւ զերկրպագուս անուանդ Քում պահեա ի խաղաղութիւն»:

Միրելիներ, Աստվածային նախախնամությամբ քրիստոնեական մեր հավատքի վավերականությունն ու ճշմարտությունը մեր ժողովրդին վիճակվեց ապրել ու վկայել գրեթե բոլոր պետություններում՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու շուրջ մնալով մեկ ժողովուրդ, նույն իղձերով ու ձգտումներով: Այս իրողության շոշափելի զգացողությունն ենք ունեցել Հայրապետական մեր բոլոր այցելությունների ընթացքում, ինչպես նաև՝ օրեր առաջ Ուրուգվայի և Բրազիլիայի հայոց թեմերում, իսկ այսօր՝ ձեր ներկայությամբ, որ հավատով հավաքվել եք Սրբազան Պատարագի արարողության: Մեր ժողովուրդը միշտ կարևորել է մեր սուրբ հավատքի

ու նախնյաց ժառանգության փոխանցումն իր զավակներին: Կարևորել է անգամ ներողությունների մեջ, զոհողությունների գնով, քանզի հավատացել է քրիստոնեական սպարգամների ու արժեքների կենդանարար զորությանն ու հաղթանակող ուժին:

Մեր ժողովուրդը եղավ բազմաչարչար, բայց նաև, բազմահաղթ, որովհետև կարողացավ ամուր մնալ Քրիստոսի սիրո ճանապարհներին, կարողացավ իր հանդեպ գործված չարիքները բարիով հաղթահարել՝ ստեղծելով ու կառուցելով: Այսօր էլ հայը, որ երկրում էլ որ լինի, մշակում ու ծաղկավետ է դարձնում այդ երկիրը, իր կորովն ու եռանդն է ներդնում այդ երկրի բարգավաճման, մշակույթի զորացման և ձեռքբերումների ամրագրման գործին: Հայորդյաց ազնվության ու առաքինության, ջանասիրության ու նախաձեռնողության շնորհիվ Սփյուռքի մեր գաղթօջախներն ու համայնքները հարգանք ու վստահություն են ձեռավորել մեր ժողովրդի հանդեպ:

Սիրելիներ, ուրախությամբ է լցվում Մեր սիրտը, երբ այսօր ականատես ենք ձեր ազգասեր ու եկեղեցասեր ընթացքին: Մայր Հայրենիքից հեռու դուք պահպանում եք հայ ոգին ու նկարագիրը, պահպանում եք մեր մայրենին ու պատմությունը, մեր նախնյաց սուրբ ժառանգությունը և ավանդում ձեր զավակներին: Այլն պատրաստակամ եք մասնակցություն բերելու Հայաստանի զորացմանը, ձեր կարելիություններով աջակցում եք նորանկախ մեր պետականության ամրապնդմանն ու առաջընթացին, և նաև՝ Սուրբ Էջմիածնի պայծառությանը: Մեր բարձր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում ձեզ բոլորիդ, Մեր ամենաջերմ մաղթանքներն ու օրհնությունն ենք բերում Արգենտինայի հայոց Տիրախնամ թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գիսակ արքեպիսկոպոս Մուրադյանին, հոգևոր դասին, եկեղեցական ու ազգային կառույցների նվիրյալ անդամներին, ինչպես նաև այս օրերի ընթացքին կազմակերպված հրաշալի հանդիսությունների բոլոր նախաձեռնողներին ու գործակցողներին, որոնց ջանքերի շնորհիվ կարելի եղավ առավելագույնս արդյունավետությամբ իրականացնել Հովվապետական Մեր այցի ծրագիրը:

Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց Արգենտինայի ժողովրդին և պետությանը, որ Հայոց Մեծ եղեռնից հետո ապաստան փվեցին այս ափերում հաստատված արևմտահայության բեկորներին:

Այնուհետև մատաղաճաշ տրվեց ՀԲԸՄ սրահում: Հրաժեշտ տալով Կորդոբայի հայությանը, Նորին Սրբությունը նույն օրը մեկնեց Բուենոս Այրես՝ շարունակելով Արգենտինայի հայոց թեմ Հովվապետական իր անդրանիկ այցելությունը:

Բուենոս Այրեսի Միջազգային օդանավակայանից Նորին Սրբությունը պատվո պահակախմբով և արգենտինահայ համայնքի ներկայացուցիչների ուղեկցությամբ առաջնորդվեց դեպի Արգենտինայի հայոց թեմի առաջնորդանիստ Ս. Գրիգոր Լուսավորիչ տաճար: Մինչ տաճար հասնելը Նորին Սրբությունը հայրապետական ամպհովանու ներքո անցավ զորգապատ ճանապարհով: Հայրապետական ամպհովանակիրներն էին Արգենտինայի հայոց

թեմի Թեմական խորհրդի ատենապետ Արմեն Մեծատուրյանը, բարերարներ Գրիգոր Դերձակյանը, Սամվել Մարկոսյանը և Գրիգոր Չնոգյանը: Հայոց Հայրապետին պատվո տողանով դիմավորեցին Արգենտինահայ վարժարանների աշակերտները, ՀԲԸՄ և ՀՄԸՄ-ի ու Մխիթարյանների սկաուտները, իսկ հայրապետական թափորի հետ ընթացող ժողովուրդը ձեռքերում պահել էր վառվող մոմեր:

Վեհափառը Վիսչեթե Լոպեսի Ս. Գևորգ եկեղեցու դպրաց դասի (խմբավար՝ Նուբար Դեմիրճյան) «Հրաշափառ»-ի երգեցողությամբ առաջնորդվեց եկեղեցի:

Վեհափառ Հայրապետին դիմավորելու համար եկեղեցի էին եկել Բուենոս Այրեսի կարդինալ Պերկոլիո արքեպիսկոպոսը, Ռուս Ուղղափառ Եկեղեցու Արգենտինայի առաջնորդ Պլատոն եպիսկոպոսը, Անտիոքի Եկեղեցու Արգենտինայի առաջնորդ Կիրիլ եպիսկոպոսը, Անգլիկան Եկեղեցու Արգենտինայի առաջնորդ Կառլոս Հալփերին, Հայ Կաթողիկե հայերի առաջնորդ Վարդան արքեպիսկոպոս Պողոսյանը:

Վեհափառ Հայրապետին բարիգալստյան խոսք ասաց Արգենտինայի հայոց թեմի առաջնորդ Գիսակ արքեպիսկոպոս Մուրադյանը: Այնուհետև ներկաներին հայրապետական իր պատգամն ուղղեց Վեհափառ Հայրապետը՝ բարձր գնահատելով նվիրումի այն ոգին, որով տեղի հայությունը պահում է իր ազգային-հոգևոր դիմագիծը հեռավոր այս ափերում և որի արտահայտություններից է Հայոց Հայրապետի դիմավորման այս հուզիչ արարողությունը:

Շարականների կատարմամբ ապա հանդես եկավ «Կոմիտաս» երգչախումբը՝ խմբավարությամբ Մաքրուհի Էլոմեսյանի: Տերունական աղոթքից հետո տեղի ունեցավ Աջհամբույր, որը տևեց շուրջ մեկուկես ժամ:

Քանի որ Հայոց Հայրապետին դիմավորելու եկած ժողովրդի մի զգալի մասը չէր կարողացել եկեղեցի մտնել՝ տեղ չլինելու պատճառով, ուստի դրսում դրվել էին հեռուստատեսային մեծ պաստառներ, որոնց վրա ցուցադրվում էր եկեղեցու ներսում ընթացող արարողությունը:

Ի նշանավորումն Վեհափառ Հայրապետի այս այցելության, Մուրեքյանների ընտանիքը Մայր Աթոռին նվիրեց Մինաս Ավետիսյանի իրենց ընտանիքում պահվող երկու կտավներ, որոնցից առաջինը Տիգրան Մյուրեքյանի դիմանկարն է, իսկ երկրորդը՝ Մինասի ինքնադիմանկարը՝ կատարված 1966-1967 թթ.: Տիգրան Մյուրեքյանի դիմանկարի ետևում կտավին Մինասը գրել է. «Սիրով նվիրում եմ հայրենանվեր մեծ գործերի հեղինակ, իմ բարեկամ Տիգրան Մյուրեքյանին, 1972 թ., 13, X»: Բարձրորեն գնահատելով այս քայլը, Գարեգին Երկրորդ Հայրապետը հավարտ Ս. Պատարագի ասաց.

Մենք տեղյակ էինք, որ այստեղ, Մյուրեքյանների ընտանիքում պահվում են հոգեպույս Մինաս Ավետիսյանի երկու նկարները, և երբ դիմեցինք Խորհուրդ Մյուրեքյանին, եթե նա արդյոք պիտի ցանկար իր հոր այդ նկարները նվիրել Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, ուր բացվում է Արշիլ Գորկու կտավների պատկերասրահ, այնտեղ զետեղելու համար: Գոհունակ սրտով և գնահատանքի Մեր խոսքը բերելով Խորհուրդ Մյուրեքյանին և նրա ընտանիքին, կուզենք տեղեկացնել, որ սիրահոժար կերպով հանձն առան այս երկու գործերը նվիրաբերելու Մայր Աթոռ Ս. Էջ-

միածնին: Երկու կտավներ մեր անվանի նկարիչ Մինասյան Ավետիսյանի գործերից՝ «Իսլամադիմանկար» և Տիգրան Մյուրեղյանի դիմանկարը, որը կուզենք սիրով ներկայացնել ձեզ և մեր աղոթքը բարձրացնել Մյուրեղյան ընտանիքի համար:

Բնականաբար սերունդների համար պիտի արձանագրենք, որ այս նկարները հովվապետական Մեր այցի ընթացքին Ս. Էջմիածնին նվիրեց Մյուրեղյան ընտանիքը: Այս առիթով Մենք ցանկանում ենք Մեր գնահատանքը բերել Մեր բոլոր բարերար զավակներին, ովքեր սատարել են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ծրագրերին ինչպես անցյալում, այնպես նաև այսօր: Թող Տերը օրհնի, կյանք և արնշտություն պարգևի և գործոց հարանորոգ հաջողություններ Մեր բարերար զավակներին: Թող իրենց բարի գործը իրենց կյանքից ներս հեղի Աստուծո օրհնությունը և Աստծո բյուր շնորհները:

Երեկոյան ի պատիվ Վեհափառ Հայրապետի տրվեց համայնքային մեծ ճաշկերույթ, որի ընթացքում Վեհափառ Հայրապետը վերստին բարձր գնահատեց Մինասի զույգ գործերը Մայր Աթոռին նվիրելու Մյուրեղյանների ընտանիքի որոշումը՝ հույս հայտնելով, որ ժամանակի ընթացքում հայրենիքում ի մի կժողովվեն աշխարհի տարբեր անկյուններում պահվող հայ արվեստի գործերը:

Պատասխան խոսքում Խորխե Մյուրեղյանն իր ուրախությունը հայտնեց՝ ասելով, որ հպարտ է, որ իրենց ընտանիքի համար թանկ և նվիրական այս երկու կտավներն այսուհետ ցուցադրվելու են հայ ժողովրդի հոգևոր կենտրոնում բացվելիք պատկերասրահում:

17 մայիսի

Առավոտյան Վեհափառ Հայրապետն այցելեց Արգենտինայում Հայաստանի Հանրապետության դեսպանատուն:

Կեսօրին Նորին Սրբությանը հյուրընկալեց արգենտինահայ ճանաչված բարերար Էդուարդո Էռնեկյանը:

Հայոց Հայրապետը հաջորդաբար այցելեց Հաճնի հայրենակցական միության և հայ մշակութային միության հավաքատեղիները: Հաճնի միությունում բարիգալստյան խոսքով դիմեց Անի Սարգսյանը, իսկ մշակութային միությունում՝ Ադրիան Լոմլոմճյանը:

Երեկոյան ժողովրդային հյուրասիրություն էր կազմակերպվել Արմենիա մշակութային միությունում, ուր կազմակերպության կողմից ողջույնի խոսք ասաց Արթուրո Հովհաննիսյանը: Ապա հավաքվածներին իր ողջույնի և օրհնության խոսքն ուղղեց Նորին Սրբությունը՝ ասելով. *«Սիրելիներ, արդեն մի քանի օրեր ձեզ հետ ենք և ուիսուանքով ենք անդրադառնում, որ մի քանի օրից պիտի հրաժեշտ տանք ձեզ: Պիտի կարողենք ձեզ՝ հիշելով մեր հանդիպումները, նաև՝ այս խանդավառ հավաքը հայկական մշակութային միությունում: Մենք այցելեցինք ազգային-հայրենակցական տարբեր միություններ, կրթական ու բարեսիրական հաստատություններ և ակնանատես եղանք ձեր հավատքի բացառիկ ջերմությանը, ձեր ազգասիրությանը և նվիրումին՝ հանդեպ մեր Եկեղեցին ու Հայրենիքը, ձեր նախանձախնդրությանն ու*

ՄՅՈՒՐԵՔՅԱՆՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԸ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅԱՆՆ Է ՀԱՆՁՆՈՒՄ
ՄԱՅՐ ԱԹՈՌԻՆ ՆՎԻՐԱԾ ՄԻՆԱՍԻ ԵՐԿՈՒ ՆԿԱՐՆԵՐԸ

Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՄԱՏՈՒՌԻ ՕԾՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ԲՈՒԵՆՈՍ ԱՅՐԵՍԻ ԱՐՄԵՆԻԱ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ԿԱՆԳՆԵՑՎԱԾ ԽԱՉՔԱՐԻ
ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ջանքերին, որպեսզի հայ կյանքը պահպանվի ու զորանա Արգենտինայում: Եվ Մենք միփթարված հոգով ու գոտեպնդված պիտի բաժանվենք ձեզանից: Սպասելու ենք ձեզ Հայաստանում, քանզի գիտենք, որ շարունակ ձեր արդար վաստակը միախառնում եք հայրենի հողին, ազատ նոր կյանքին Հայաստանի ու Արցախի: Սպասելու ենք բոլորիդ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, որի շինությունն ու պաշտամունքը ձեզնով է, համայն մեր ժողովրդով է»:

18 մայիսի

Առավոտյան Վեհափառ Հայրապետն այցելեց Հայ-Արգենտինյան դպրոց, որը վաթսունական թվականներին կառուցվել է բարերարությամբ քույր և եղբայր Սիրանույշ և Պողոս Արզումանյանների: Կառուցելով այս դպրոցը, բարերարները ցանկացել են, որ այն կոչվի Հայ-Արգենտինյան և ամեն տարի այստեղ նշվի մայիսի 28-ը: Հայաստանի անկախացումից հետո Սիրանույշ Արզումանյանը և ամուսինը՝ Արմեն Մեծատուրյանը, Հայաստանում համանման ձևով նորոգեցին և կահավորեցին Կամոյի անվան դպրոցը: Հայաստանի իշխանությունների համաձայնությամբ այն վերանվանվեց Արգենտինա-Հայկական, և այստեղ էլ ամեն տարի նշվում է Արգենտինայի անկախության օրը՝ հուլիսի 9-ը:

Այս դպրոցում ևս Վեհափառ Հայրապետն ընդունվեց մեծ խանդավառությամբ: Հատուկ այս առիթով հրավիրված զինվորական նվագախմբի հետ աշակերտները կատարեցին Հայաստանի և Արգենտինայի Հանրապետությունների օրհներգերը: Դպրոցի տնօրենուհին բարի գալուստ մաղթելով Նորին Սրբությանը, ասաց, որ աշակերտներին այստեղ սովորեցնում են նաև հայկական երգ ու պար և ուսումնասիրում հայոց պատմությունը և մշակույթը:

Վեհափառ Հայրապետը դպրոցին նվիրեց հայկական մանրանկարչության ժամանակակից մի ընդօրինակություն և իր տպավորությունները գրեց դպրոցի պատվո հյուրերի մատյանում՝ բարձր գնահատելով դպրոցի դերը հայ-արգենտինական հարաբերությունների և կապերի զորացման գործում, գնահատանքի խոսքերով հիշելով դպրոցի կառուցման բարերարներ Սիրանույշ և Պողոս Արզումանյաններին և Արմեն Մեծատուրյանին: Ապա Վեհափառ Հայրապետն իր օրհնությունը բաշխեց ներկաներին՝ պատգամելով. *«Հայրապետական Մեր ուղևորությունների ընթացքում առանձնակի սիրով ենք այցելում հայկական դպրոցները, որոնք ճանաչողություն ու լույս են սերմանում մեր զավակների հոգում և փոխանցում նրանց ուսեղենիկ մեր մայրենին, մեր պատմությունն ու հայրենի սրբությունները: Սիրելի երեխաներ, Մենք եկել ենք Հայաստանից, որը Հայրենիքն է բոլոր հայերի, և որի մասին հաճախ լսում եք ձեր ուսուցիչներից ու ծնողներից: Նրանք ուզում են, որ դուք նույնպես շատ սիրեք Հայաստանը, որը հնագույն երկրներից մեկն է աշխարհի, ծանոթ լինեք ու սիրեք մեր պատմությունը, հարուստ մեր մշակույթը: Այս փափագով հիմնադրել են այս գեղեցիկ դպրոցը նրա բարերարները՝ Պողոս և Սիրանույշ Արզումանյանները, որ դուք տերն ու շարունակողները լինեք այն մեծ ժառանգության, որ ունենք մեր նախնիներից: Նաև, որ դուք արժանավոր զավակները լինեք Արգենտինայի, ծառայեք նրա առաջընթացին ու Հայաստանի և Արգենտինայի բարեկամությանը:*

Միրելիներ, պատմական հանգամանքների բերումով այնպես է ստացվել, որ մեր ժողովրդի բազմաթիվ զավակներ ապրում են տարբեր երկրներում և ունեն երկու Հայրենիք և հավասարապես սիրում են իրենց երկու Հայրենիքները: Ձեր դպրոցը այդ սերը կրթելու և զորացնելու լավագույն օրինակ է: Այսօր պետությունների ղեկավարները, քաղաքագետները ջանքեր են ներդնում, որպեսզի աշխարհում ամենուր խաղաղություն լինի, որ մարդիկ միմյանց մեջ իրենց բարեկամը տեսնեն: Մարդկության այդ բարի օրը դպրոցներում է, որ պիտի ծնունդ առնի: Ասածս ամենաառաջ շնորհներն ու օրհնությունն ենք հայցում ձեզ, սիրելի ուսուցիչներ և կրթության գործի նվիրյալներ, սիրասուն սաներ, որպեսզի ձեր միասնական ջանքերով միշտ պայծառ ու լուսավոր լինի հայ-արգենտինական դպրոցը: Թող Տերը միշտ զորակից լինի ձեզ ու առաջնորդ, պահպանի քաջառողջ ու երջանիկ»:

Կեսօրին, ժամը 12.30-ին, Հայրապետական շքախմբով և մեծ թվով արգենտինահայերի հետ Վեհափառ Հայրապետն այցելեց Արգենտինայի ազգապարար զորավար Խոսե Դե Սան Մարտինիի հուշարձան:

Այնուհետև Արտաքին գործերի նախարարությունում Վեհափառ Հայրապետը հանդիպեց տարբեր երկրների և միջազգային կազմակերպությունների՝ Արգենտինայում հավատարմագրված դեսպանների և դիվանագիտական ներկայացուցչությունների անդամների և պետական-քաղաքական տարբեր գործիչների հետ՝ հանգամանալից պատմական ակնարկով ներկայացնելով Հայոց Եկեղեցու անցած ուղին և այսօրվա առաքելությունը:

Արգենտինայի հայոց թեմի առաջնորդարանում Վեհափառ Հայրապետը երեկոյան հանդիպեց հրեա համայնքի ներկայացուցիչներին, որոնք եկել էին բարի գալուստ մաղթելու Հայոց Հայրապետին:

Այնուհետև Նորին Սրբությունն այցելեց Մարաշի հայրենակցական միության կենտրոն: Քանի որ միության նախագահ Լուիզ Սանջյանը բացակայում էր քաղաքից, նրա ողջույնի խոսքն ընթերցեց Մարի Մոմճյանը՝ի մասնավորի ասելով.

Այսօր մենք պատիվ ունինք շարունակողները ըլլալու պայքարի մը, որ երբեմն շատ դժուար եղաւ, պարզապէս հայութեան բոցը վառ պահելու առաջադրանքը որպէս գլխաւոր նպատակ ունենալով:

Աստուծոյ հաւատացեալ մեր եկեղեցին իբրեւ գլխաւոր դրօշակ, որմէ կ'առնենք լոյսը եւ ուղիին շարունակելու համար մեր աշխատանքը:

Պատրաստ զինուորներ պայքարելու համար, ուր որ հարկ է: Դարբնուած ենք երիտասարդ այն ուժով եւ գիտակցութեամբ, որ մեր մեծերը փոխանցեցին, եւ Եկեղեցին որպէս փարոս ալեկոծ ծովուն մէջ կը լուսաւորէ մեր ճամբան:

Վերջերս շատ անգամ լսած եմ, որ մեր յաջորդող սերունդները անխուսափելիօրէն պիտի չհասնին մեր լեզուն, որ ժամանակի բերումով պիտի կորսուի: Նկատի առած եմ նաեւ Ձեր խիստ մտահոգութիւնը, որ մեր դպրոցներուն մէջ աշակերտները մեծ դժուարութիւններ կը ցուցաբերեն հայերէն արտայայտուելու հա-

մար: Թերեւս այսպէս է եւ այսպէս պիտի ըլլայ: Բայց մենք անկարելի պիտի ընենք, որպէսզի այդ դժբախտութիւնը չպատահի:

Այնպէս, ինչպէս Յիսուս Երուսաղէմ մտած ժամանակ կատարելով կոյրին հրաշքը, նոյնպէս կը փափաքինք, որ Ձեր գալուստը իրականացնէ նոյն հրաշքը՝ մեր աչքերէն անհետացնելով այն քողը, որ թոյլ չի տար մեզի տեսնելու մօտակայ ապագան:

Մարաշցի ընտանիքը կ'աղօթէ որ Աստուած Ձեզ պահէ ու պահպանէ, ուժ եւ համբերութիւն շնորհէ Ձեր առաքելութեան մէջ, զոր առաջ կը տանիք այնքան զոհողութեամբ, ինչ որ անձնապէս նշմարեցի: Կ'ուզեմ, որ արժեւորենք այդ զոհողութիւնը, որպէսզի կարենանք Ձեզմէ ստանալ այն անհրաժեշտ գիտակցութիւնը եւ համեստութիւնը, որ թոյլ տայ արդիւնաւորել Սիսիոնի հայ գաղութի մը ճիգերը, առանց անիմաստ հակառակութիւններու, միացեալ եւ ուժեղ, պատրաստելու համար մեր մեծերը եւ մասնաւորապէս, որպէսզի Դուք՝ մեր հոգեւոր Հայրը, հպարտ ըլլաք մեզմով՝ Ձեր որդիներով:

Այս միության երիտասարդների անունից խոսք ասաց Աննա-Լաուրա Ճուլմայանը.

Մենք խումբ մը հայ երիտասարդներ ենք: Հայ մարաշցիներու սերունդէն:

Շատ քիչ ժամանակ է, որ կազմակերպեցինք այս խումբը, եւ մեր փափաքն է եւ նպատակը՝ հաւաքել ոչ միայն մարաշցի սերունդը, այլ բոլոր հայ երիտասարդները, որոնք կը ցանկան միանալ մեզի չկորսնցնելու համար մեր մեծերու ըրած զոհողութիւնները, որպէսզի այս օտար ափերուն մէջ, Մայր Հայրենիքէն շատ հեռու, կարողանանք պահպանել մեր հայ սովորութիւնները, լեզուն, մշակոյթը եւ ամենէն կարեւորը՝ կրօնքը:

Վեհափառ Տէր, կ'ուզենք Ձեր հայրական օրհնութիւնը մեր այս նոր խումբին, որպէսզի կարողանանք հայապահպանման գործը շարունակել, եւ յոյսով ենք, որ մեր աշխատանքը պիտի տայ իր պտուղը եւ այսպէսով մարաշցի հայ երիտասարդներս պիտի հասնինք մեր նպատակին:

Հայրապետական շքախմբի անդամներից Երևանի Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարանի ռեկտոր Վիլեն Հակոբյանը ելույթ ունենալով՝ իր հիացմունքը հայտնեց այն կամքի ու համառության համար, որով Արգենտինայի հայությունը շարունակում է պահել իր ազգային-հոգևոր ինքնությունը:

Վերջում գնահատանքի իր խոսքն ասաց Հայոց Հայրապետը և ի հիշատակ այս հանդիպման հուշանվերներ հանձնեց միությանը և միության պատասխանատուներին, պատգամելով հավատարիմ մնալ Ս. Գրիգոր Լուսավորչի հավատքին, որը 1700 տարիներ որպես անհատնում յուղ վառվել է Լուսավորչի կանթեղի մեջ և լուսավորել մեր ազգի ճանապարհը:

Մարաշի Հայրենակցական միությունից հետո Նորին Սրբությունն այցելեց Թեքեյան մշակութային միություն, ուր հրատարակվում է նաև «Սարդարապատ» շաբաթաթերթը:

Միության անունից Հայոց Հայրապետին ողջունեց Սերխիո Նահապետյանը՝ ասելով.

Նորին Սուրբ Օծութիւն Տէր Տէր

Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոս.

Մարդու կեանքին մէջ բացառիկ օրեր կան:

Մայիս 18-ն այդ պահերէն մին է:

Թէքէեան Մշակ. Միութիւնը, «Սարուրարապատ» շաբաթաթերթը եւ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը մեծ պատիւ կը զգանք, Վեհափառ Տէր, Ձեզ ընդունելով մեր Տան մէջ, եւ մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնենք Աստուծոյ, որ առիթը կը պարգեւէ մեզի հանդիպելու Ձերդ Սրբութեան, Ձեր առաջին այս այցելութեան ընթացքին:

Օգոստոս 11-ին, 1996 թուականին, երբ Երջանկայիշատակ Գարեգին Ա Կաթողիկոսի այցելութեամբ օրհնուեցաւ հիմնաքարը այս յուշարձանին, կնքամայրութեամբ ազնուափայլ տիկին Սիրանոյշ Արզումանեան-Մեծատուրեանի, մեր հանգոյցը այն էր, որ այս եզակի Արմենիա փողոցին վրայ, ուր կը գտնուին Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարը, Ապրիլեան Յուշարձանը, դպրոցներ, միութիւններ եւ թերթեր, չէր կրնար բացակայիլ ազատութեան այս խորհրդանիշը:

Վեհափառ Տէր,

Ձեր այսօրուան այցելութեամբ այս յուշարձանի անլռելի զանգակատունը ըստ բանաստեղծի կը հնչէ ու կ'արձագանգէ բոլոր հայերուն սիրտերուն մէջ, աշխարհի չորս ծագերը, արժանթինեան այս հեռաւոր կեդրոնէն:

Սարուրարապատը այսպիսով կը վերածուի մեր ամենօրեայ պայքարին, այսպիսով մենք կը շարունակենք մեր գոյամարտը, լինելու եւ չլինելու մեր պայքարը, երիտասարդութեան փոխանցելով մեր շունչը, որովհետեւ Սարուրարապատը հոն է, ուր հայութիւնը կ'ապրի, հոն, ուր ազատութեան կամքն է, հոն է, ուր հայութիւնը վճռած է ապրիլ յաւերժօրէն:

Վեհափառ Տէր,

Ձեր օրհնութեամբ չենք կրնար ուրիշ բան ընել, եթէ ոչ ամրապնդել մեր ուխտը, որ որքան ատեն որ կ'ապրինք՝ պիտի չմոռնանք Սարուրարապատը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, մեր Մայր Հայրենիքը: Պիտի չմոռնանք մեր Այր Բեն Գիմ-ը եւ Վարդանեան կրակով ու Սարուրարապատեան խանդով կերտուած հայ անունը պիտի կրենք, մեր ազգին պատիւին ու փառքին համար:

Թէքէեան Մշակ. Միութեան «Սուրէն եւ Վիրճինիա» Կեդրոնը իր յարկին տակ կը համախմբէ տարբեր կալուածներու հայ արուեստագէտներ, այն համոզումով, որ ասիկա լաւագոյն միջոցներէն մէկն է տարածելու մեր դարաւոր մշակոյթը, ըլլայ մեր գաղութին եւ ըլլայ արժանթինեան շրջանակներու մէջ:

Թէքէեան Մշակութային Միութիւնը շուրջ երեսուն տարիէ ի վեր կը հրատարակէ «Սարուրարապատ» շաբաթաթերթը՝ Ռամկավար Ազատական Կուսակցութեան պաշտօնաթերթը, իբրեւ լրատու օրգանը Հարաւային Ամերիկայի հայ գաղութներուն: Մեր շաբաթաթերթը հիմնուած է այն օրերուն, երբ տակաւին մեր

հայրենիքը անկախ պետականութիւն չունէր եւ չէր կրնար որիշ անուն կրել, քան այն անունը, որ կը խորհրդանշէ մեր ազգային անկախութեան եւ ազատութեան անմար զգացումը: Սարդարապատը թիկունք կը կանգնի հայ հաւատարմութիւններու եւ միութիւնների գործունէութեան, արժեւորելով անոնց զոհողութիւնը՝ հայապահպանումի դժուարին գործին մէջ:

Միության առջև է գտնվում՝ ի հիշատակ Սարդարապատի ճակատամարտի կանգնեցված հուշարձանը, և այստեղ, դիմելով հավաքված հայորդիներին, Վեհափառը մեկ առ մեկ հիշեց մեր ժողովրդի Մայիսյան հաղթանակները և հորդորեց ազգային մեր կյանքում միշտ ապրել Մայիսյան հաղթանակների այս ոգով՝ ասելով. *«Սիրելի հայորդիներ, նախախնամաբար, մայիս ամիսը մեր ժողովրդի կյանքում մեծ հաղթանակների ամիս է դարձել: Մայիսին «Մահն իմացեալ անմահութիւն է» գաղափարականով, մեր նախնիները մարտնչեցին Ավարայրի դաշտում և պահեցին քրիստոնեական մեր սուրբ հավատը ու հայրենյաց ժառանգությունը: Վասն հավատի ու հայրենյաց այնուհետև դարեր-դարեր բազում մարտեր է մղել մեր ժողովուրդը, չի խնայել իր արյունը, որպեսզի հայ ապրի ու քրիստոնյա, որպեսզի ազատ տեսնի իր Հայրենիքը: Սուրբ Վարդանանց ոգին հաղթանակեց նաև Սարդարապատում և այդ օրերին ծնունդ առնող հերոսամարտերում, որոնցով և հիմքերը դրվեցին հայոց պետականության՝ Հայաստանի առաջին Հանրապետության: Մայիսյան արեգակը լուսավորեց նաև Շուշիի ազատագրությունը Արցախի համար մեր պայքարում: Այսօր ազատ իր նոր կյանքն է կերտում մեր Հայրենիքը, ազատագրված Արցախը, այսօր վերարթնացյալ կյանքի նոր հույսեր են համայն մեր ժողովրդի հոգում, և մենք կառուցելով ու արարելով պիտի շարունակենք ապրել վասն հավատի ու հայրենյաց: Եվ թող Աստված, Ով խնամել է մեզ ու պահպանել փորձությունների մեջ, Իր Աջի ներքո հաղթական պահի մեր ժողովրդի ընթացքը»:*

Օրը եզրափակվեց ՀԲԸՄ-ի կազմակերպած ճաշկերույթով, որին ներկա էին հինգ հարյուր հոգի: Բարեգործականի Արգենտինայի մասնաճյուղի կողմից Նորին Սրբությանն այստեղ ողջունեց միության ատենապետ Վահրամ Հայրապետյանը:

19 մայիսի

Առավոտյան Վեհափառ Հայրապետը շարունակեց իր այցելությունները Բուենոս Այրեսի հայկական վարժարաններ՝ առաջինը լինելով Մխիթարյանների դպրոցում, որտեղից, ապա, առաջնորդվեց Վիսենթե Լոպեսի Ս. Գևորգ հայոց եկեղեցի, ուր Նորին Սրբությանը ողջունեց եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Արմաշ քահանա Բոզոյանը: Ապա Նորին Սրբությունն իր Հայրապետական պատգամն ուղղեց բոլոր ներկաներին.

Գոհություն ու փառք ենք առ Աստված բարձրացնում, սիրելի բարպաշտ հավատացյալներ, որ այսօր կանգնած ենք Ս. Գևորգ եկեղեցու լուսեղեն այս հարկի

ներքո և աղոթք ենք առ Աստված բարձրացնում և հայցում՝ մեր հայրերի բառերով ասելով՝ «Տէր, կեցցո դու զհայս»:

Հայոց Հայրապետները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Իջման Սուրբ Սեղանի առջև և նաև իրենց այցելությունների ժամանակ, Հայ Եկեղեցու աշխարհասփյուռ թեմերում այս հայցն են բարձրացրել երկրիք՝ իմնդրելով, որ Տերը պահի-պահպանի ազգս հայոց՝ իբրև ժողովուրդ հարազատ, որը պատմության ընթացքում բազմիցս վկայել է իր հավատարմության մասին: Նահատակվել է հանուն Քրիստոսի, բազմիցս խաչվել ու միշտ հավատացել, որ Աստված իր կենդանարար զորությամբ պիտի վերստին կյանք պարգևի ու հարություն:

Հավատքը ուժ և զորություն է պարգևել մեր ժողովրդին իրեն բաժին ընկած ամենադառը փորձությունները հաղթահարելու, ոտքի կանգնելու, ավերված տունը կառուցելու, Հայրենիքից տարագիր՝ հայրենի ծուխը ծխելու, իր եկեղեցին ու դպրոցը հաստատելու ու վերստին, անդադար ու անձանձիր Աստված փառաբանելու: Այսօր անանվազ նույն հավատքով պիտի հայցենք, որ Տերը միշտ Իր բարի հայացքը, Իր հովանավոր Աջը հովանի դարձնի մեր ժողովրդի գավակաց վրա, և պահի անխոռով ու պահի ամբողջ ու հավատավոր:

Այս գեղեցիկ եկեղեցին կառուցող ձեր հայրերն էլ, որ աղոթքով շաղախել են նրա պատերը, հուսացել են, որ իրենց զավակները պիտի գան ու հաղորդակից դառնան իրենց աղոթքներին, և այս եկեղեցուց ներս Աստվածփառաբանությամբ շարունակ հնչի՝ «Տէր, կեցցո դու զհայս»: Ու չլինի այնպես, որ մեր եկեղեցիները լեցուն լինեն միայն այն ժամանակ, երբ Հայրապետն է այցելում այնտեղ: Չլինի, որ հայկական դպրոցներում մարի հայոց լեզուն, մոռացվի հայոց պատմությունը, հայ մարդուն անհաղորդ ու անսեր մնա նրա մշակույթը:

Արդարև, սիրելիներ, Աստուծո ողորմությունը, գութն ու սերը կլինի մեր ազգի հետ, երբ մենք մեր հայրերի օրինակով խոսենք մեր Աստծո հետ, հավատարիմ լինենք ինքներս մեզ, քրիստոնյա հայի մեր Աստվածասեր հոգուն: Պիտի շեն պահենք մեր դպրոցները, եկեղեցական-ազգային կյանքը ու հավատանք, որ նույնիսկ նրանց հոգում, ովքեր հեռանում են ազգային նկարագրից, ինչ-որ մի օր պիտի խոսի հայությունը՝ առաջնորդելով դեպի իր արմատները, իր ինքնությունը ու մայրենին: Որքան էլ փոխվեն ժամանակները, նրանց բերած հրապույրները, նորությունները ու հետաքրքրությունները, անանց են մնալու այն արժեքները, որ ժառանգություն ունենք մեր հայրերից: Կյանքի իմաստն ու մեր երջանկությունը կգտնենք մեր եկեղեցիների նվիրական հարկերի ներքո, Աստուծո մեջ, աստվածահաճո ճանապարհներին, մեր հայրենասեր ու ազգասեր հոգիներում: Տիրոջ խոսքն է ուսուցանում. «Հոգին է կենդանարար»:

Մենք մեր գնահատանքն ենք բերում մեր սիրելի Տեր Հորը, որի անձնվեր ծառայության մասին այս օրերում բազում վկայություններ լսեցինք, Մեր գնահատանքն ենք բերում նաև նվիրյալ ու ծառայասեր մեր եկեղեցականներին, մեր ազգայիններին ու բարերարներին, որոնց ջանքերով արթուն է եկեղեցական-համայնքային կյանքը: Մեր աղոթքն ու մաղթանքն է հանապազօր. «Տէր, կեցցո դու

զհայս», և թող Տիրոջ ողորմությունը, շնորհն ու օրհնությունը անպակաս լինեն ձեզանից ու համայն արգենտինահայոց կյանքից այսօր, միշտ և հավիտյան: Ամեն:

Նույն օրը Վեհափառ Հայրապետն այցելեց Ազգային Դերձակյան վարժարան:

Կեսօրին Նորին Սրբությունը հանդիպեց Արգենտինայի արտաքին գործերի նախարար Ռաֆայել Պիելսային:

Կաթոլիկ Եկեղեցու Արգենտինայի Մայր Տաճարում (Կաթեդրալում) երեկոյան տեղի ունեցավ էկումենիկ աղոթք՝ ընկերակցությամբ Պերեկոկլիո արքեպիսկոպոսի և երգեցողությամբ «Կոմիտաս» երգչախմբի:

Խոսքն ուղղելով հավաքված հավատացյալներին, Վեհափառ Հայրապետն իր օրհնությունը բերեց Արգենտինայի ժողովրդին: Անդրադառնալով քրիստոնյա աշխարհին և ընդհանրապես մարդկությանը հուզող հիմնախնդիրներին, Նորին Սրբությունը նշեց նաև, որ աշխարհի Եկեղեցիները ևս իրենց ձայնը պետք է բարձրացնեն Հայոց ցեղասպանության միջազգայնորեն ճանաչման համար, ինչպես որ այդ ոճրագործությունը դատապարտեց Հռոմի քահանայապետ Հովհաննես Պողոս Բ Պապը:

20 մայիսի

Առավոտյան Վեհափառ Հայրապետն այցելեց ՀԲԸՄ-ի վարժարան, ուր աշակերտների կազմակերպած հանդեսից հետո Նորին Սրբությանը դիմեց վարժարանի հայկական բաժնի տնօրեն Ռոսիտա Ցուսուֆյան-Պալյանը:

Կեսօրին Վեհափառ Հայրապետը հանդիպեց Արգենտինայի Հանրապետության նախագահ Նեստոր Քիրշների հետ: Նորին Սրբությունը բարօրություն և բարգավաճում մաղթեց Արգենտինային, որը երկրորդ հայրենիք է դարձել Մեծ եղեռնից հետո այստեղ ապաստանած հայերի և նրանց այսօրվա սերունդների համար: Նախագահը, շնորհակալություն հայտնելով այս այցելության համար, բարձր գնահատեց իրենց երկրի կյանքում արգենտինահայության ունեցած դերը՝ գոհունակությամբ անդրադառնալով հայոց կարևոր ներդրումին Արգենտինայի կյանքում:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը հանդիպեց երկրի փոխնախագահ և սենատի նախագահ Դանիել Սիոլլիի, ապա և Բուենոս Այրեսի քաղաքապետ Անիպալ Իպարրայի հետ:

Այս հանդիպումների ընթացքում Նորին Սրբությանը ընկերակցում էին Արգենտինայում Հայաստանի Հանրապետության դեսպան Արա Այվազյանը, Արգենտինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գիսակ արքեպիսկոպոս Մուրադյանը, Թեմական Խորհրդի ատենապետ Արմեն Մեծատուրյանը, արգենտինահայ ճանաչված գործարար և բարերար Էդուարդո Էռենկյանը և Բուենոս Այրեսի նահանգի անվտանգության նախարար Լևոն-Կառլոս Արսլանյանը:

Այս հանդիպումների ընթացքում ներկայացնելով հայ ժողովրդի և Հայոց Եկեղեցու պատմությունը, Նորին Սրբությունը հայոց գրերի ստեղծման 1600-ամյակի տոնակատա-

ությունների առիթով Հայաստան հրավիրեց Արգենտինայի նախագահին, փոխնախագահին և Բուենոս Այրեսի քաղաքապետին:

Պաշտոնական այս ընդունելություններից հետո Վեհափառ Հայրապետն այցելեց հայ կաթողիկե համայնքի Ս. Նարեկ եկեղեցի, ուր բարիգալստյան խոսք ասաց Վարդան արքեպիսկոպոս Պողոսյանը, ապա Նորին Սրբությունը հավաքվածներին փոխանցեց Ս. Էջմիածնի օրհնությունը:

Երեկոյան Ալվեալ Փալաս ճաշասրահում ընդհանուր համազգային ճաշկերույթ տրվեց ի պատիվ Հայոց Հայրապետի, որին ներկա էին քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, պետական պաշտոնատար անձինք և 300 արգենտինահայեր: Նորին Սրբությանն այստեղ ողջույնի խոսքով դիմեց Արգենտինայում ՀՀ դեսպան Արա Այվազյանը: Այնուհետև Հայոց Հայրապետը տարիների ազգային-եկեղեցական իրենց գործունեության համար «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրեց տեր և տիկին Սամվել և Անգին Մարկոսյաններին (տե՛ս էջ 61), «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով՝ Խորխե Վարդպետոնյանին, Էդուարդո Գարամյանին, Պողոս Պետրոսյանին, Վահրամ Հայրապետյանին, Նահապետ Նահապետյանին ու Անի Խլեբնիկյանին, և «Օրհնության գիր» տվեց «Կոմիտաս» երգչախմբին, բարերարուհի Դորիս Չնոգյանին փոխանցեց Հայաստանի Հանրապետության կեցության իրավունքի անձնագիր, իսկ Հույն Օրթոդոքս Եկեղեցու Արգենտինայի առաջնորդ Կիրիլ եպիսկոպոսին նվիրեց լանջախաչ:

21 մայիսի

Վեհափառ Հայրապետը Հայոց Եկեղեցու պատմությանը և ներկա առաքելությանը նվիրված դասախոսությամբ հանդես եկավ Արտաքին գործերի նախարարությունում: Դասախոսությունը, որին ներկա էին բազմաթիվ դիվանագետներ, քաղաքական գործիչներ և լրագրողներ, կազմակերպել էր Արգենտինայի Արտաքին գործերի նախարարության կրոնի քարտուղարությունը:

Վեհափառ Հայրապետն այնուհետև այցելեց Վալենտին Ալսինայի Ս. Հակոբ եկեղեցի և Խրիմյան վարժարան, ուր Նորին Սրբությանը բարեողջույնի խոսք ասաց Ֆլորա Ազշեհիրյանը:

Հայոց Հայրապետն ապա այցելեց Գրիգոր Լուսավորիչ կրթական հաստատություն, ուր աշակերտները գեղարվեստական հայաշունչ մի հանդես էին կազմակերպել: Այստեղ ողջույնի խոսք ասաց այս հաստատության նախակրթարանի հայկական բաժնի տնօրեն Անի Սարգսյանը:

Վեհափառն Առաջնորդարանում երեկոյան հանդիպեց Արգենտինայի իսլամական համայնքի ներկայացուցիչներին, ապա այցելեց հայ գործարարների միության Քամարա Արխենտինո-Արմենիա կենտրոն:

Ուշ երեկոյան Հայ կենտրոնի սրահում Նորին Սրբությունը հանդիպեց հայ երիտասարդներին: Ավելի քան երկու ժամ տևած այս հանդիպման ընթացքում անկեղծ խոսակցություն ծավալվեց Սփյուռքի այսօրվա նոր սերնդին հուզող հարցերի շուրջ:

ՏԱՐ ՎԵՐԻՆՈՒՄ ՊՈԵՏԻՍՏԱՆՈՒՄԸ ՎԵՐԻՎԻՏՂԵՑԻՆ ՈՒՍԿԻՎՈՒՄ

Академия наук Армянской ССР

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆԸ՝ ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԻ ՍԱՆԵՐՈՎ

22 մայիսի

Վեհափառ Հայրապետն առավոտյան կատարեց օծումը Հ.Օ.Մ.-ի հանգստյան տան շրջափակում Արտո Գալաճյանի և իր տիկնոջ բարերարությամբ կառուցված Ս. Աստվածածին մատուռի:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՄԱՏՈՒՌԻ ՕԾՄԱՆԸ

(22 մայիսի 2004 թ.)

«Սա է դուռն երկնից, արդարոց հանգիստ,
Մեղաւորաց քաւարան, Քրիստոսի արքայարան,
Հրեշտակաց բնակարան, Սրբոց ժողովարան,
Տեղի ապաւինի եւ դուռն Աստուծոյ»:
(Ղազար Ջահկեցի)

Սիրելի հավատացյալ հայորդիներ.

Այսօր կրկնակի ուրախությամբ է լցված Հայրապետիս հոգին, քանզի հոգ ու հովիվ, հովվապետ ու ժողովուրդ Արցախի օրհնյալ հողում միասնական աղոթքներով կատարեցինք օրհնությունն ու օծումը նորաշեն այս մատուռի: Դռներն է բացում հայոց մի նոր սրբատեղի, որը, հիրավի, բոլորիս համար «դուռն Աստուծոյ եւ տեղի ապաւինի» է:

Արդարն, մեր ժողովրդի զավակները պատմության դժվարին հանգամանքների բերումով հեռանալով Հայրենիքից, ապավինության վայր ու Հայրենիք են վերագտել իրենց սրբատեղիներում, քանզի հայրենական մեր ամենամեծ ժառանգությունը հավատն է առ Աստված: Այսօր Սրբազան Մյուռոնով կատարեցինք սրբազան այս մատուռի օրհնությունն ու օծումը՝ վստահությամբ, որ հոգևոր մի նոր Հայրենիք ենք վերակերտում արցախահայոց համար: Հայրենիք, որով ի մի են գողված համայն հայության սրտերն ու հոգիները, Հայրենիք, որ հարազատ ճառագայթն է Մայր Հայրենիքում շողացող Սուրբ Էջմիածնի Արեգակի:

Յուրաքանչյուր Սուրբ Տաճար մի մասնիկն է Սուրբ Էջմիածնի՝ցրված մեր զավակների կյանքում որպես վկայություն, որ Էջմիածնի Մյուռոնով օծված ամեն հայկական եկեղեցի նույն այդ Մյուռոնով Էջմիածնանում է և շարունակում Սուրբ Էջմիածնի առաքելությունը: Երեկ և այսօր նույնն է այդ առաքելությունը՝ հավատ բաշխել հեռու և մոտիկ իր զավակներին, որպեսզի միշտ տեսնեն էջը Քրիստոսի: Իր զավակներին հավատարիմ պահել իրենց արմատներին և հարանց ժառանգության ու մայր հողի սիրույն: Ամեն եկեղեցու, մատուռի, խաչքարի հետ Սուրբ Էջմիածինն իր առաքելությամբ վերածնվում է ու հարություն առնում յուրաքանչյուր հայ համայնքում:

Միրելիներ, մեր ժողովուրդը եկեղեցու հիմնարկության մեջ մշտապես տեսել է իր համայնքի հոգևոր վերափոխության խորհուրդը: Միաժամանակ ամեն եկեղեցու հետ մեր ժողովուրդը գտել է իր ազգային կյանքի վերազարթոնքը: Այս ամբողջությունն է, որ մշտապես հիշեցնում է, որ մենք ժառանգներն ենք մեր հայրերի, պապերի ենք նրանցից մեզ ավանդված համաքրիստոնեական ու ազգային արժեքների:

Ուրախ է Հայրապետիս հոգին, որ կատարեցինք օծումը տիար Ժիրայր Քալֆայանի հիշատակին կառուցված այս մատուռն և աղոթք ենք բարձրացնում երկնային երանական բարձունքներում նրա հոգու հանգստության համար: Մեր գնահատանքը նրա ընտանյաց անդամներին, ժառանգներին, ովքեր սեր դրսևորելով իրենց ծնողաց հիշատակին, ազնիվ զգացումներով կանգնեցրել են այս մատուռը՝ որպես մշտահոս վկայություն իրենց հավատարմության և իրենց հավատքի:

Մենք հավատում ենք, որ Արգենտինայի օրհնյալ հողում կառուցված նորաաոծ այս մատուռը հոգու ձեր աչքերը մշտապես պետք է ուղղի դեպի Մայր Հայրենիք և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Հայոց Եկեղեցու սրբազան կամարների ներքո վերանում են տարածություն ու ժամանակ: Հայոց Եկեղեցին հայու հոգիները միացնող կամուրջն է, ուր միահյուսվում են աշխարհասփյուռ Մեր զավակաց աղոթքները:

Աղոթում ենք, որ Տերը շինություն և ամրություն պարգևի նորանկախացյալ մեր Հայրենիքին, միշտ բարգավաճ պահպանի Արգենտինան և բարօր՝ նրա բարեպաշտ ժողովրդին:

Թող Աստված օրհնի ամենքիդ, շնորհը պարգևի հավատարիմ մնալու մեր հայրենյաց սուրբ ավանդներին՝ վասն փառաց Փրկչին մերոյ և ի պայծառություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ հավիտյանս. ամեն:

Օծումից հետո Նորին Սրբությանն ուղղված բարիգալստյան խոսք ասաց ՀՕՄ-ի տեղի ատենապետուհի Մարալ Թորիկյանը:

Բուենոս Այրեսի Արմենիա հրապարակում կեսօրին կանգնեցվեց Հայաստանից բերված գեղաքանդակ խաչքար՝ պատրաստված բարերարությամբ տեր և տիկին Գևորգ և Վերա Գարակյոզյանների և իրենց զավակ Արթուրոյի: Վեհափառ Հայրապետը «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրեց Արթուրո և Ալին Գարակյոզյաններին: Օրհնելով խաչքարը՝ Նորին Սրբությունը հավաքվածներին ուղղեց օրհնության և գնահատանքի իր խոսքը.

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԲՈՒԵՆՈՍ ԱՅՐԵՍԻ ԱՐՄԵՆԻԱ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ԿԱՆԳՆԵՑՎԱԾ ԽԱՉՔԱՐԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆԸ

«Զօրութիւն Սուրբ Խաչի Քո Քրիստոս,
որ կանգնեցեր ի փրկութիւն աշխարհի»:
(Շարական)

Սիրելի հայորդիք.

Փառք ենք վերառաքում առ Աստված, որ հոգևոր-ազգային մեր մշակույթն ամենայն իր արժեքներով ու հրաշք կոթողներով գովքն է հյուսում Բարձրյալի և նաև վկայում մեր ժողովրդի ստեղծագործական հզոր ներուժի մասին: Այսօր մենք հավաքվել ենք հայկական այս խաչքարի շուրջ, որը քարեղեն խտացումն է մեր ժողովրդի կրոնական խորը զգացումի և մեր մշակույթի դարավոր առանձնահատուկ արտահայտությունը: Ամեն խաչքար անկրկնելի է իր հորինվածքով, բայց բոլոր խաչքարերը մեկ են իրենց խորհրդով՝ պանծացնելով Տերունի Խաչը՝ որպես հույսը մեր փրկության:

Մենք երջանկությունն ենք ունեցել կատարելու խաչքարի օրհնության արարողությունները աշխարհի տարբեր երկրներում՝ Միացյալ Նահանգներում, Ռուսաստանում, Ավստրիայում, Ֆրանսիայում և այլուր: Այսօր Մեզ համար բացառիկ ուրախություն է, որ մեր ժողովրդի հավատքով հոգի առած խաչքարը զետեղվում է Արգենտինայի այս օրհնյալ հողում: Երկիր, ուր այնքան սրտեր ու հոգիներ են ուրախակից ու վշտակից եղել մեր ժողովրդին ցնծության ու տխրության օրերին, երկիր, որի քաղաքացու բարձր կոչումն արժանապատվորեն ու հպարտությամբ են կրում բազմահազար հայեր: Մենք հավատում ենք, որ այս խաչքարը օրհնության նոր աղբյուր է լինելու արգենտինահայության կյանքում: Հավատում ենք նաև, որ մարդկային մեր տկար բարբառի միջոցով խորհուրդներով պարուրված Անքնին Աստված Իր երկնային ու աստվածային շնորհներն է հեղում քարակերտ այս Սուրբ Նշանի վրա, և մեր նախնյաց օրինակով հայցում ենք՝թող մեզ հետ լինի «զօրութիւն Սուրբ Խաչի Քո Քրիստոս, որ կանգնեցեր ի փրկութիւն աշխարհի»:

Մեր նախնյաց օրինակով Մենք էլ այսօր խաչքարի օրհնությամբ հռչակում ենք Տերունական Սուրբ Խաչը մեզ հույս ու ապավինություն, ճանաչում ենք Խաչը մեզ վերածնող ու հարություն պարգևող: Արդարև՝ որտեղ հայ մարդ, այնտեղ՝ խաչքար: Մեզ համար լինելիությունն ու հարատևությունն առանց Սուրբ Խաչի զորության նույնական է չգոյության հետ, որովհետև մեր բազմադարյան պատմության ընթացքը՝ լուսավորյալ Քրիստոսական լույսով, վկայում է Խաչի ու մեր ազգի անբաժանելիության, Խաչի ու մեր խաչապաշտության, Տերունի Սուրբ Նշանի ու մեր խաչակրության մասին: Արդարև, խաչակրություն էր ճամփան նաև դեպի հարավային Ամերիկա ձգվող հայորդիների, երբ 20-րդ դարասկզբին Եղեռնից մա-

զապուրծ եկան հաստատվելու հյուրընկալ այս երկրում: Հաստատում ենք այս խաչքարը որպես վկայարան Արգենտինա գաղթած մեր ժողովրդի զավակների անլուր տառապանքների ու զրկանքների: Հաստատում ենք խաչքարն այս որպես նշան հաղթության մեր ժողովրդի աննկուն ու ստեղծարար ոգու, որ կարողացավ դժբախտությունը բարեբախտության վերածիտել: Այսօր դուք եք, սիրելի զավակներ մեր, ժառանգորդները ձեր հայրերի, և համատեղ մեր ուժերով պետք է արժեվորվի տառապանքն ու զրկանքը գաղթական հայորդիների: Մեզ է թողնված սուրբ պատգամը՝ հավատարիմ մնալ մեր նախնյաց սուրբ կտակին և ավանդին: Դիրավի, որպես խաչի խորհուրդն անթերի ընդբռնած ազգ ու Եկեղեցի, այլևս մեր հարատևությունը պայմանավորված է խաչի անտեսանելի, բայց զգալի ու իմանալի զորությամբ:

Մեր աղոթքն է, որ Տերունի Սուրբ Նշանի կենդանարար զորությամբ մեր հոգիներում կենդանի մնա հարության շունչը, որպեսզի նոր հոգեգալուստով պայծառակերպվենք ի փառս Բարձրյալն Աստծո և ի պայծառություն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Թող Մարդասեր Աստված Իր ամենահաղթ Սուրբ Խաչով հավերտ պահպանի մեր աշխարհացրիվ զավակաց ու մեր Հայրենին, պահպանի Արգենտինան ու նրա ժողովրդին և հաղաղություն պարգևի համայն մարդկությանն ու աշխարհին. ամեն:

Այնուհետև խոսք ասաց Արգենտինայում ՀՀ դեսպան Արա Այվազյանը, ապա ելույթ ունեցան «Նաիրի», «Մասիս», «Գայանե» պարախմբերը և Բուենոս Այրեսի հայկական բոլոր երգչախմբերը:

Երեկոյան Վեհափառ Հայրապետը հյուրընկալվեց տեր և տիկին Արմեն և Սիրանույշ Մեծատուրյանների բնակարանում: Մեծատուրյանները Նորին Սրբությանը նվիրեցին գեղարվեստական բարձրարվեստ փորագրություններով զարդարված փղոսկրյա մի հեռախոս:

Ուշ երեկոյան Հայոց Հայրապետն այցելեց Քանթրի թաղի հայկական թաղամաս, ուր Նորին Սրբությանը բարիգալստյան խոսքով դիմեց հայկական այս թաղի վարչության ատենապետ և Բուենոս Այրեսի նահանգի անվտանգության նախարար Լևոն-Կառլոս Արսլանյանը:

23 մայիսի

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն առավոտյան Ս. Պատարագ մատուցեց Արգենտինայի հայոց թեմի Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ եկեղեցում:

ՏԵՍ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԱՐՈՒՄԸ
ԿԱՅԱՑՐԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ
ԲՈՒՆԵԼՈՒ ՍԱՐԻՍԻ ՕՐՈՒՄՆԵՐԻՆ ՎՐԱՅԵՏ ՄՈՐԳԻՍ

Академия наук Армянской ССР
Фундаментальная

«ՀՐԱՇԱՓԱՌ»-ՈՎ ՄՈՒՏՔ ԲՈՒԵՆՈՍ ԱՅՐԵՍԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԲՈՒԵՆՈՍ ԱՅՐԵՍԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(23 մայիսի 2004 թ.)

*«Խաչի Քո Քրիստոս, երկիր սպագանեմք
եւ զՍուրբ Յարութիւնդ փառաւորեմք»:*

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ.

Գոհություն և փառք ենք մատուցում Բարձրյալին, որ շնորհեց Մեզ ուրախությունը Հայրապետական Մեր անդրանիկ այցելությունը կատարելու Արցախի հայոց թեմ և այսօր Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու աղոթախոս այս հարկի ներքո ձեզ հետ միասնաբար աղոթք բարձրացնելու առ Աստված:

Հպարտ է Հայրապետիս հոգին՝ տեսնելով, որ Հայրենիքից այսքան հեռու մի մեծ երկրի բանուկ կյանքում դուք, հավատարիմ ձեր պապերի ու հայրերի կրոնին, համախումբ եք մեր Սուրբ Եկեղեցու շուրջ և սրբորեն պահպանում եք մեր նախնյաց ավանդները ու հայրենասպաշտ ոգին: Ձեր ներկայության մեջ տեսնում ենք նաև աշխարհասփյուռ մեր ժողովրդի միասնականությունը: Միասնականությունը մեր անցյալով ու ներկայով, մեր նույն իղձերով ու տեսիլքով:

Բյուր ողջույն ենք բերել ձեզ բորբոքիչ նվիրական եզերքներից վերանկախացյալ ու ազատ մեր Հայրենիքի, կարոտն ու սերը և օրհնությունն ենք բերել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, որտեղից 1700 տարիներ առաջ հատայն մեր ժողովրդի վրա սփռվեց կենդանարար Խաչի լույսը մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի: Այդ օրից ի վեր ապրել ենք ապավինած Հարուցյալ Խաչի զորությանը: Հիրավի, մեր ժողովուրդը կարող է վկայել Խաչի հաղթանակը մահվան դեմ: Տասնամյակներ առաջ այստեղ հաստատված ձեր պապերն ու հայրերը նույնպես հաստատեցին, որ Խաչի ճանապարհը կյանքի հաղթանակն է: Հավատավոր հոգով նրանք նոր կյանք սկսեցին՝ իրենց ջանքն ու եռանդը միախառնելով կյանքին օրհնյալ այս երկրի, որն ընդունեց նրանց ու դարձավ երկրորդ Հայրենիք: Գիտենք, որ դուք քրիստոնյա հայի նույն նկարագրով, առ քրիստոս սերը ձեր հոգիներում շարունակում եք ձեր հայրերի ավանդները, և փառք ենք մատուցում Տիրոջը, որ Իր Սուրբ Խաչի հովանու ներքո միշտ երիտասարդ ու կյանքով լեցուն է պահպանում մեր ժողովրդին: Եվ թող մեր շուրթերին հնչի, ինչպես երեկ, այսօր ու միշտ՝ «Խաչի Քո Քրիստոս, երկիրս պագանեմք եւ զՍուրբ Յարութիւնդ փառաւորեմք»:

Սիրելի բարեպաշտ հայորդիներ, մեր հանդիպումը մայիսյան այս օրերին առանձնակիորեն խորհրդաշատ է ու ոգեկոչ, քանզի մայիսը հայրենական մեր կյանքում լուսավորված է մեր խաչակնիք հոգու հաղթանակներով: Մայիսը ոգեկոչում է հիշատակները կենաց ու մահու մարտերի Ավարայրի դաշտում, Սարդա-

ղապարում և նաև՝ Շուշիի ազատագրության համար Արցախի երկնամերձ լեռներում:

Այսօր մեզ հետ են իմկելի քաջերը հայրենյաց պաշտպան: Այստե՛ղ են մեր հավատի ու հայրենի ժառանգության համար դարեր շարունակ իրենց կյանքը զոհաբերած, մեր ժողովրդի գոյության համար, Հայաստանի ազատագրության համար դարերով ջանք թափած, տքնած մեր սուրբ նախնիները: Մեզ հետ են Եռաբլուրում հանգչող ազատամարտիկները, որ Արցախի հերոսամարտերում համալրեցին անմահների զորագունդը: Մեզ հետ են առ Հայրենին իրենց բոցավառ սիրով և իրենց անվերապահ ապավինությամբ առ Տերունական Խաչը կենարար, որ եղավ մեզ փրկություն ու առաջնորդեց մեզ դեպի հարությամբ լեցուն, հուսառատ նոր կյանքի արշալույսները:

Սիրելի բարեպաշտ հայորդիներ: Այսօր քաջություն, նվիրում ու զոհողություն է պահանջվում մեզանից, որպեսզի շենացնենք ու հզորացնենք Հայաստանն ու Արցախը, որպեսզի զորացնենք հայ կյանքը Սփյուռքում: Հիշենք վերստին, որ հավատն է մեր ամենահաղթ զորությունը, և միասնությունն է նրա ուժականությունը:

Մենք բոլորս այսօր Հայաստանում և Սփյուռքում լի ենք լավատեսությամբ: Մենք ունենք վստահությունը ցեղասպանություն վերապրած ժողովրդի և լեցուն ենք հույսերով պետականությունը վերականգնած ու Արցախի ազատությունը պաշտպանած սերնդի: Հայրապետիս հրավերն ու պատգամն է՝ վերստին ու միշտ մեր գործերով պանծացնենք Հարուցյալ Խաչը Քրիստոսի: Կանգուն ու պայծառ պահենք Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին, որպեսզի Տերունական Սուրբ Խաչի զորությամբ միշտ օրհնյալ լինի մեր կյանքը, և միշտ կեցցե Մայր Հայաստան:

Թող Բարին Աստված Իր Սուրբ Խաչի հովանու ներքո պահպանի Արգենտինան, նրա Քրիստոսասեր ժողովրդին և արգենտինահայոց:

Եկեք միահյուսենք մեր աղոթքները և հայցենք. Տեր, հաստատուն պահիր Քո Սուրբ Եկեղեցին և առաջնորդիր համայն ազգերին եղբայրական սիրո ու համագործակցության շավիղներով՝ հանուն աշխարհում խաղաղության հաստատման, հանուն ազատության, արդարության և իրավունքի պաշտպանության: Եվ թող միշտ մեր շուրթերին հնչի իբրև երկնահաս փառաբանություն՝ «Խաչի Քո Քրիստոս, երկիրպագանենք եւ զՍուրբ Յարութիւնդ փառաւորեմք». Ամեն:

Վեհափառ Հայրապետն ապա լանջախաչ նվիրեց թեմական առաջնորդ Գիսակ Սրբազանին և կարդինալ Պերկոկլիոյին:

Ս. Պատարագից հետո Հայ Կենտրոնի սրահում, դպրոցի ճաշասրահում և կից խփված վրաններում, ուր հավաքված ժողովրդի թիվն անցնում էր մի քանի հազարից, տրվեց մատաղաճաշ, որը վերածվեց ժողովրդական տոնախմբության: Այստեղ Գարեգին Բ Վեհափառ Հայրապետին Հայ Կենտրոնի վարչության կողմից բարիգալստյան ողջույնի խոսքով դիմեց Պետրոս Հաջյանը.

Վեհափառ Տէր,

Այս պահուս ինձի կը վիճակուի յանուն Հայ Կեդրոնի վարչութեան բարի գալուստ եւ բարի կեցութիւն յայտնելու Ձերդ Սրբութեան, նաեւ արտայայտելու մեր բոլորին երախտագիտութիւնը, որ յանձն առիք կատարել այս երկար եւ յոգնեցուցիչ ճամբորդութիւնը՝ տեսնելու համար հեռաւոր այս ափերու հայ հաւատացեալները:

Ես պատմական կոչեցի Ձեր այցելութիւնը ոչ թէ որովհետեւ Ձեր առաջին այցելութիւնն է մեր շրջանները, ոչ թէ որովհետեւ ամբողջ հայոց պատմութեան ընթացքին՝ դժբախտութիւններու եւ դժուարութիւններու միջոցին, Հայ Եկեղեցին ցուցաբերած է դիմադրական ոգի մը, այլեւ այսօր եւս մեր ժողովուրդը կը դիմագրաւէ ներկայի մարտահրաւէրները: Եթէ Հայաստանի մէջ զանազան աղանդներ կը սպառնան մեր ժողովուրդի աւանդական հաւատալիքներուն, կը սպառնան մեր Եկեղեցիին, Սփիւռքի մէջ եւս ներքին անտարբերութիւնը, հետզհետէ շեշտուող ապահայացումը, հայախօսութեան նահանջը եւ ուծացումը կը սպառնան տկարացնել մեր ազգային ոգին:

Նման ճակատագրական պահերուն, մեր Եկեղեցին ունեցած է քաջ եւ խիզախ հայրապետներ, որոնք Ս. Էջմիածնի լոյսով եւ յոյսով, Ս. Էջմիածնէն բխող հոգեկան հզօրութեամբ առաջնորդած են մեր ժողովուրդը:

Ես կը յանդգնիմ այստեղ ընդգծել Գարեգին Բ. Վեհափառ Հօր ծաւալած գործունէութեան քանի մը գիծերը, իր գահակալութեան համեմատաբար կարճ ժամանակամիջոցին.

- Գումարել ազգային-եկեղեցական խորհրդաժողովներ, որպէսզի միշտ վառ ու արթուն մնայ մեր ժողովուրդի ազգային ոգին, որպէսզի միշտ ամուր մնայ հոգեկան կապը աշխարհացրիւ հայ գաղութներու եւ Էջմիածնի միջեւ:

- Պատրաստել երիտասարդ եւ իրենց առաքելութեան գիտակից եկեղեցականներու փաղանգ մը, որպէսզի ուժեղանայ մեր Եկեղեցին:

- Խստապահանջ ըլլալ այն եկեղեցականներուն հանդէպ, որոնք կը թերանան հոգեւոր իրենց կոչումին մէջ:

- Վերջապէս, շրջագայիլ թեմէ-թեմ եւ գաղութէ-գաղութ, իրազեկ ըլլալու համար հայութեան առօրեայ հոգերուն:

Այսօր, արժանթինահայ գաղութն է որ կը վայելէ հովուապետական այդ այցելութիւնը:

Հայ ժողովուրդի մարմնական ամբողջութեան մէջ, մեր բոլոր կազմակերպութիւնները ունին իրենց տեղն ու դերակատարութիւնը, Սուրբ Էջմիածինը սակայն կը գրաւէ կեդրոնական տեղը: Ան սիրտն է հայութեան, եւ ինչպէս սիրտը արիւն կը դրկէ մարմնի միւս անդամներուն, Էջմիածինն ալ շունչ եւ լոյս կը դրկէ աշխարհով մէկ ցրուած հայութեան բեկորներուն: Եւ քանի որ սրտէն ելլող արիւնը մաքրելու համար կը վերադառնայ սիրտին, մենք եւս տեւաբար պէտք է վերադառնանք Էջմիածնին, ձգտինք Էջմիածնին:

Բարի եկաք, Վեհափառ Տէր, որպէսզի բարի ըլլայ մեր ճանապարհը:

Երեկոյան Հայոց Հայրապետն այցելեց ՀՄԸՄ-ի մարզադաշտ, ուր Նորին Սրբությանը բարիգալստյան խոսքով դիմեց միության ատենապետ Էդվարդո Խաչերյանը:

24 մայիսի

Վեհափառ Հայրապետն առավոտյան այցելեց Վարագա Ս. Խաչ և Ս. Պողոս եկեղեցիներ, Ֆլորենսի ազգային Արծրունի վարժարան, ուր բարիգալստյան խոսք ասաց ուսուցչուհի Անահիտ Սիրունյանը, ապա և Պաշչաճյան վարժարան, որտեղ էլ Նորին Սրբությանը դիմեց դպրոցի տնօրեն Ալիսա Թենեքճյանը:

Երեկոյան տեղի ունեցավ ողջերթի հանդիսություն, ուր երաժշտական կատարումներով հանդես եկավ արգենտինյան «Էնքուենթրոս» նվագախումբը՝ ղեկավարությամբ Ալիսիա Թերգյանի:

Հայոց Հայրապետին հայ ժողովրդի հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածին բարի վերադարձի խոսք ասաց Հայ Կենտրոնի վարչության փոխատենապետ Ալբերտո Ճերեճյանը՝ շեշտելով, որ Նորին Սրբությունն իր օրհնաբեր այցելությամբ նոր շունչ ու կենսունակություն հաղորդեց Հարավային Ամերիկայի հայկական համայնքներին:

Ուշ երեկոյան Վեհափառ Հայրապետն ընթրեց Թեմական խորհրդի անդամների հետ՝ միաժամանակ քննարկելով ազգային-եկեղեցական կյանքին վերաբերող մի շարք խնդիրներ: Նորին Սրբությունը, ի հիշատակ իր այցելության, հուշանվերներ հանձնեց վարչության անդամներին:

Հաջորդ օրը, առավոտյան, Հայոց Հայրապետը Կաթողիկե Եկեղեցու Բուենոս Այրեսի Մայր Տաճարում մասնակցեց Արգենտինայի անկախության օրվա առիթով կազմակերպված արարողությանը՝ երկրի անկախության տոնի կապակցությամբ շնորհավորելով հանրապետության նախագահ Նեստոր Քրիշներին:

Այնուհետև Նորին Սրբությունը Հայրապետական շքախմբով և ուղեկցությամբ Արգենտինայում ՀՀ դեսպանի և համայնքային կազմակերպությունների ներկայացուցիչների, մեկնեց Բուենոս Այրեսի օդանավակայան և այստեղից Սան Պաուլու-Լոնդոն-Երևան երթուղով մայիսի 26-ին վերադարձավ Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

ԱՐԹՈՒՐ ՍԱՐԿԱՎԱԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ